

Teekagir
Hogabarjowt'ean Eti
Gowli Hayoc'
Hiwandanoc'i S. P'rki /
Hiwandanoc' S. P'rki

Teekagir Hogabarjowt'ean Eti Gowli Hayoc' Hiwandanoc'i S. P'rki / Hiwandanoc' S. P'rki. 18..-19...

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

Տ Ե Ղ Ե Կ Ա Պ Ի Ր

Հ Ո Ք Ա Բ Ա Ր Չ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե Է տի Գ ու Լ էի Ա գ գ . Հ ա ս տ ա տ ու Թ ե ա ն

(Ս . Փ Ր Կ Ի Չ)

1899 Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր 1 Է Ն 1899 Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր 31

معارف صومیه نظارت جلیله سنک ۱۳ شعبان ۳۱۸ و ۲۲ تشرین ماہی ۳۱۶
تاریخی و ۳۶۵ نوسرولی رخصتنامه سیله طبع اولمشدر



Կ . Պ Ո Լ Ի Ս

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Յ . Մ Ա Տ Թ Է Ո Ս Ե Ա Ն

1900



4123377B
(1900)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր



Հ Ո Գ Ա Բ Ա Ր Զ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե Է տի Գ ու լ է ի Ա զ գ . Հ ա ս տ ա տ ու թ ե ա ն

(Ս . Փ Ր Կ Ի Զ) .

1899 Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր 1 Է Ն . 1899 Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր 31



Կ . Գ Ո Լ Ի Ս
Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Յ . Մ Ա Տ Թ Է Ո Ս Ե Ա Ն

1900

Տ Ե Ղ Ե Կ ա գ ի ր

Լ Ո Ղ Վ Բ Վ Ր Զ Ո Ւ Թ Ե Վ Ն

Ե Լ Տ Ի Գ Ո Ւ Լ Ե Ի Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Թ Ե Ա Ն

(Ս. Փ Ր Կ Ի Զ)

1899 Յունուար 1 և 1899 Դեկտեմբեր 31

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր

եւ

Պատուարժան Տեարք Անդամք Բաղաբախտ Պատրիարքի Ժողովոյ

Ազգային Կեդրոնական Վարչութեան

Հոգաբարձութիւնս 1898 օգոստոս 4ին ի պատճօն կոչուելով, Հաստատութիւնս նիւթական աննախաւանդելի վիճակի մեջ եւ խանգարեալ պիւճեանով զտաւ, հետեւանք այս վերջին տարիներու ազգային տնտեսական վիճակի անկումս: Շուարած էինք արդարեւ պահ մը, անտուտ մեր ջանքեր եւ առ ազգայինս բրած գիմոււմներ չպիտի բաւէին բարեկարգ եւ նիւթական լաւ վիճակի մը վերածել Հաստատութիւնս եթէ երբեք Օգոստոսի առ Առասպոլս Վեհապետին շնորհը վրայ չհասնէր, որով ո՛չ միայն հացի ու մսի պարեհն առաջուան քանակին վերածելու՝ այլ նախորդ քանակին կրկինը շնորհելու Վեհօգի հրամանն բրաւ, որով մեր պատճօնաւարութեան սկզբնաւորութենէն շուրջ երեւել տօրնեակներ վերջ՝ Օգոստոս 21ին՝ Հաստատութիւնս սկսաւ առօրեայ 600 օֆա հաց եւ 150 օֆա մսի պէտական պարեհն ընդունիլ, որ լիովին կը բաւէ աւելի քան 1000 պատասխարելոյս:

Այս մեծ շնորհաց վրայ շունչ ու սիրտ առաւ Հոգաբարձու-

թիւնս . կոչում բաւ ազգայնոց նուիրասուութեան ու ձեռնարկեց Հաստատութեանս նիւնալան բարեկարգութեան , աջակցութեամբ մեզ օժանդակ մեղուաչան կրկին խնամակալութեանց—Տիկնանց եւ Որբանոցի— եւ միշտ զօրավիգ ունենալով Կայսերական կառավարութեան բարձր հովանին , որով դիւրացան մեր ամենազգի ձեռնարկները :

Ազգն՝ իւր նիւթական անկեալ վիճակին մեջ՝ մեր ակնկալութենէն աւելի առաստձեռն կերպով յօգնութիւն փութաց մեզ :

Հոգաբարձութեանս նկատմամբ ազգային մեծ վստահութեան առաջին ապացոյցը կրնայ համարուիլ՝ օժանդակութեամբ Հով Ըսֆուլի հայ ուսանողուհեաց եւ աջակցութեամբ Տիկնանց խնամակալութեան տուած նուագահանդէսն՝ որ աւելի քան 650 ոսկւոյ զուտ շահ մը ձգեց եւ զոր յուսանի՝ թէ պիտի կրնան շարունակել ամէն տարի : Երկրորդն է այն հանգանակութիւնը՝ զոր ձեռնարկեցինք նախաձեռնութեամբ Ասլանեան Յարութիւն Էֆէնիի , Հաստատութեանս Նէսի Գուլէի պարսպին մօտ ունեցած մէկ մասուրա անուօ ջուրն՝ Հաստատութեանս մեջ բերելու ու զայն բաշխելու համար . հանգանակութիւն՝ որ աւելի քան 1200 ոսկւոյ հանգաւ :

Աւելորդ կը համարինք աս բուէլ մայրաքաղաքիս , գաւառաց եւ օտար երկիրներէ՝ զանազան անուանց սակ՝ մեզ հասած ամէն կարգի նպաստներն ու նուէրները զորս տեղեկագրոյս էլեւմտից բաժնոյն մեջ կրնամ տեսնել :

Ի վաղուց՝ ինչպէս եւ մեզ կանխող Պատուարժան հոգաբարձութեանց օրով հաստատեալ եկամուտներու վրայ աւելցուցինք երկու այլ եկամուտներ . մին՝ «վասն ծաղկեփունջի» նուէրներն որ ի վերջ կոյս տարույս սկսելուն թէպէտ փոքր զուտար մը արտադրած է այս տարի , սակայն յուսանի՝ թէ ապագային պակասեալի նպաստ մը պիտի ներկայացնէ մեր հաշուեկշռոց մտից բաժնին մեջ . երկրորդն է՝ սովորութիւն եղած Համառօտ օրացոյցէն զաս հրատարակել նաեւ մի Ընդարձակ տարեգրութիւն , որ յուսանի՝ թէ մեծ շահ մը պիտի թողու մեզ :

Մեր պատճօնավարութեան ժամանակամիջոցին՝ վերոյիշեալ մէկ մասուրա ջուրն հաստատութեանս մեջ բերելով՝ զայն ամէն յարկերու մեջ բաշխելէ զաս , իրագործեցինք եւ այլ կարգ մը բարեկարգութիւններ , որոց գլխաւորներն են .

Ա. Աւելցուցող յիմարներու յատուկ 40 անկողիններ պարունակող ննջատանի մը ու իրեն յարակից մասերօք շէնքի մը շինութիւնն՝ որ աւելի քան 600 ոսկւոյ ծախուց տեղի տուաւ :

Բ. *Ռերիս-սիֆոն* անուանեալ սաֆ ջուր պատաստող կոմպաւյ մը հաստատեցաւ արանց Հիւանդանոցի մէջ . որ սաֆ ջուր կը մատակարարէ ոչ միայն Զրաբուժական սրահին, այլ եւ արանց Հիւանդանոցի, Ծերանոցի ու Յիմարանոցի ամէն յարկերուն :

Գ. Արանց Հիւանդանոցն օժտուեցաւ Զրաբուժական ընդարձակ սրահով մը :

Դ. Կանանց Հիւանդանոցի եւ աղջկանց Որբանոցի նեմիւսներն եւրոպական դրութեան վերածուեցան՝ զերժ գարեահոսութենէ :

Ե. Տնօրէնութեան գրասենեակն Հեռաձայնի թելերով կապուեցաւ Հաստատութեանս զանազան բաժիններու ու յարկերու հետ :

Զ. Հաստատութիւնս ունեցաւ Քիմիաբանական-սարրալուծական աշխատանոց մը :

Է. Արանց Հիւանդանոցի համար Բարիզէն բերուեցան սննդոց բաշխման յասուկ երկու սայլակներ :

Ը. Վիրաբուժական գործողութեան ենթարկելի հիւանդաց տեղափոխութեան համար մասնաւոր սայլակ մը շինուեցաւ :

Թ. Կանանց Հիւանդանոցի մէջ ունեցանք վիրադարմանի յասուկ խուց մը :

Ճ. Մեռելոց տեղափոխութեան համար մասնաւոր կառք մը ունեցանք . եւ այլ բազմաթիւ բարեկարգութիւններ՝ որոց ամբողջ թուումը կը տեսնուի Հաստատութեանս բժշկապետ Տօֆ. Տաղաւարեան ԷՖ.Ի Տեղեկագրոյն մէջ :

Հոգաբարձութեանս գրասեղանին վրայ կը գտնուի դեռ կարգ մը բարեկարգութեանց ցուցակն , որոց պէտքը զգացուած եւ գործադրութիւնն յառաջիկայ տարուան մնացած է եւ որք են .

Ա. Զրաբուժական սրահի մը հաստատութիւնը կանանց Հիւանդանոցի մէջ :

Բ. Սննդոց բաշխմանց սայլակ մը՝ կանանց Հիւանդանոցին համար :

Գ. *Ռերիս-սիֆոնի* կոմպաւյի մը հաստատութիւնը Կանաց բաժնոյն մէջ , որ սաֆ ջուր մատակարարէ կանանց Հիւանդանոցի, Ծերանոցի, Յիմարանոցի եւ աղջկանց Որբանոցի :

Դ. Յիմարաց պարտեզին մէջ խելագարներն արեգական դէմ պատսպարելու համար տաղաւարներու հաստատութիւնը :

Ե. Հիւանդանոցաց մէջ սնունդները վարի յարկէն վեր հանելու համար վերելակներ (ascenseur) :

Զ. Մանրացոյց մը , նրբահաս (microtome) գործի մը եւ ջերոց (etuve) մը Հիւանդանոցի աշխատանոցին համար :

է. Արանց Յիմարանոցի մասնաւոր ննջասենեակներ :

Ը. Կանանց Յիմարանոցի մեջ կասաղիներու համար յասուկ խցիկներ :

Թ. Հականեխական ջերոց (etuve) մը :

Գալով Որբանոցին՝ Հոգաբարձութիւնս՝ Խնամակալութեան առաջարկին վրայ զգալով սանուց եւ նամանաւանդ ուսմանց մասին մեծ յարմարութիւն չունեցողներու գործնական արհեստներ ուսուցանելու կարելորութիւնը, հաստատեց Կօշկակարութեան արհեստանոց մը՝ ուր այժմ կ'աշխատին 15 սանունք . մտադիր ենք յառաջիկային հաստատել նաեւ Դերձակութեան, Կահագործութեան, Ոստայնակութեան, եւ այլ նիւղեր :

Հաստատութիւնս երբեմն քանի մը հարիւր պատասպարելոց յասկացեալ էր, անդ դիմողաց թիւն օր քան զօր անելով՝ ունինք այժմ շուրջ հազար անձանց բնակչութիւն մը՝ որոնց 200ը հիւանդներ, 300ը յիմարներ, 300ը որբեր, 150ը ծեր ու անկեալ, եւ 50ը ուսանող եւլն. են : Պատասպարելոց յարանունը ընթացքը մտահոգ կ'ընէ զմեզ, զի ներկայ շինութիւնք սկսած են արդէն նեղ զալ :

Հաստատութեանս վերաշինութեան ուրուագծոյն զլիաւոր երեք մասերէն երկուքը միայն շինուած են, իսկ Գ.ն որ բուն Հիւանդանոցի մասը կը կազմէ՝ դեռ սկսուած չէ : Հիւանդ գրաւած են Յիմարաց բաժինն, որով այս վերջիններն Հիւանդարանի գէտնայարկերուն մեջ կ'անյրնեն ցորեկները : Եւ կրնանք ըսել թէ Հաստատութեանս մեջ բնակչութեան տեսակէտով միայն յիմարները կը նեղուին :

Հաստատութեանս հին շէնքէն մնացած են միայն Մատուռ ու Դեղարան, որոց առաջինը յառաջիկային քարաշէն պիտի կառուցուի, իսկ երկրորդը՝ ծախիւք Վսեմ. Տօր. Խորասաննեան ԷՖ.ի որ շուրջ 300 ոսկւոյ գումար մը նուիրած է արդէն առ այս :

Որբանոցի սանունք շնորհիւ մեղուաջան կրկին խնամակալութեանց՝ մասնաւոր հոգածութեան առարկայ են . սակայն անոնց թուոյն օր քան զօր անուր մտահոգ կ'ընէ զմեզ եւ հակառակ անոնց բնակավայրից պարբերական ընդլայնման խնդրեալ են այժմ : Յուսանք թէ Գարակեօզեան կտակաւ Հաստատութեանս մօտ հիմնուելիք Արհեստանոց-Որբանոցը մեծապէս պիտի ամօքէ իրաց այս վիճակը :

Պատրս կը համարինք սոս խորին շնորհակալութիւն յայնիւ Ազնուափայլ Խնամակալութեան Տիկնանց, Աղաւնի Գազազեան, Աննիկ Համամնեան, Բրաբիոն Աղասեան, Երանուհի Կիւմիւշեկերեան, Էլիզա

Տեր-Յարուբիւնեան , Իսկոհի Փափագեան, Յուսիանէ Տիլպէր . եւ Որբանոցի Խնամակալութեան անդամոց Ազնուաշուի Տեարց Գրիգոր Ալեանաբեան , Լեւոն Բանիկեան , Պօղոս Քերէսեհեան եւ Պետրոս Կարապետեան :

Ներկայ Տեղեկագիրս երեք ուրոյն մասերէ կը բաղկանայ , առաջինն է Տեղեկագիր Հաստատութեան անձնիւր մասի , Հիւանդանոց , Յիմարանոց , Որբանոց , Անկեղանոց-Ծերանոց , Ուսանողի եւ Մոմարան :

Բ.րդ մասն Հաստատութեան օժանդակ յարկերու տեղեկագրերը կը պարունակէ . որպէս Դեղատան , Հանդերձարան , Մառան , Անասնարան , Խոհանոց , Արհեստաւոր , Մատուռ , Մատենադարան ու Դիւան , Պարտեզ եւ Հրապարակ :

Գ.րդ մասն ելեւմտից համարատուութիւնն է , ուր կը նշանակենք Հաստատութեան կալուածները , գոյքերը , եկամուտները , ծախքերն , եւայլն :

Ներկայ տեղեկագիրս կնքելէ առաջ , նուիրական պարտք կը զգանք մեր հրապարակային ջերմագին շնորհակալութիւնները մասուցանելու Հայ ազգն՝ որ այնչափ վստահութեամբ պատասխանեց մեր ամեն կոչերուն եւ հանգանակութեանց , ու իւր ինքնաբուղիս նուերներով քաջալերեց զմեզ , եւ առ Պատկ. Վարչութիւնդ՝ որ լիազօր իշխանութեամբ մեզ յանձնեց այս Ազգային ամենակարեւոր Հաստատութեան դիկն ու հոգածութիւնը : Ձեռն ի խղճի կ'ըսենք թէ ջանացած ենք եւ պիտի ջանանք մերովսանն ամենայնիւ արժանաւոր ըլլալ Վարչական եւ Ազգային այս անսահման վստահութեան :

Խնդրենք , Ամեն. Սրբազան Հայր , հանեցեք օրհնել Հաստատութիւնս ու զայն մասակարարող ազգային նուիրատուներն , եւ աղօթել վասն կենաց Օգոստոսափառ Կայսեր որ Հաստատութեանս առաջին նպատակն է :

Մասշէլով ի համբոյր Սրբազնաօծ աջոյդ
մնամք յարգանօք

Անդամք Հոգաբարձութեան Եկեօի Գուշի Ազգ. Հաստատութեան

Գանձապետ	Ատենադպիր	Ատենապետ
ԳՅՈՒՆԻԿ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆ	Գ. Մ. ԱԼԵԱՆԱՔԵԱՆ	ՊԱՏՐԻԿ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ

Անդամք

ՏՕՔ. ԽՈՐԱՍՈՒՆՃԵԱՆ	ՏԻԳՐԱՆ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՏՕՔ. Ա. ՆԱԶԱՐԵԱՆ	Գ. ԿԻՒՄԻՒՇԿԵՐՏԱՆ
ԳՐԻԳՈՐ Խ. ԷՎՐԷՆԵԱՆ	ՅԱԿՈՔ ՍԹԱՄՊՈՒԼԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա .

ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՍ ԶԱՆԱԶԱՆ ՄԱՍԵՐԸ



Ա. ԷՊԻՍԿՈՊՈՍՆՈՅ

Ի. ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԲԱԺԻՆ

1899 Մարտ 2 կն մինչ 1 Յունուար 1900



Ազնուաշուք Ասեկապետ ԷՔէնի

ու

Պատուարժան Տեառք Անդամք մեղուաջան Հոգաբարձութեան

Եկեք-Գուշի Ազգ. Հաստատութեան

ի Մեծ Նոր խան

Ազգանուէր եւ Ժրաջան Տեա'րք

Հիւանդանոցաց բժշկական տեղեկագրերու պարբերական պատրաստութիւնն եւ հրատարակութիւնը կրկին տեսակէսներով կարեւոր են . նախ՝ օգտակար են բժշկական մարմնոյն՝ զի անդ պատկերացեալ կը տեսնէ իւր եւ իրեն նախորդաց ջանքերն , ուղղութիւնն ու արդիւնքը . կը բաղդատէ զայն այլ հիւանդանոցաց գործունէութեան արդեանց հետ , եւ ըստ այնմ կ'ուղղէ իւր աշխատութիւնները , ձգտելով աւելի օգտակար ըլլալ իրեն խնամոց յանձնեալ դժբաղդներուն եւ մարդկութեան : Միւս կողմանէ այդ տեղեկագրաց միջոցաւ հոգաբարձական մարմինները համարատուութիւն մը կ'ընեն ժողովրդեան որ իւր նուիրատուութեամբ ու կտակներով կը հոգայ այդ հաստատութեանց ծախսը , ցոյց տալով անոնց իրենց զոհողութեանց արդիւնքը , հրաւիրելով այսպէս անոնց ուշը այդ գթութեան յարկին ու հաստատութեան նկատմամբ :

Ցաւալի է որ Հաստատութեանս հիմնարկութենէն (1834) ցարդ քանի մը տեղեկագրեր միայն պատրաստուած եւ կամ լոյս տեսած են՝ որոց անգրանիկն է Տօք. Մատթէոսեանինը 1868-1872, յորմէ տարիներ վերջ՝ 1878 նոյեմբեր 16ին՝ սղբացեայն Տօք. Օրմանեան Հիւանդանոցիս բժիշկ անուանուելով՝ իւր պաշտօնավարութեան ժամանակամիջոցին կ'օժտէ Ազգային Հիւանդանոցն երկու կարեւոր տեղեկագրերով, մին 1876 նոյ. 16էն մինչ 1882 Գեկ. 31, իսկ միւսն 1883ի Յունուար 1էն մինչ ցվերջ 1886 տարուայ⁽¹⁾ : Ապա կրկին ընդմիջում մինչ ցվերջ կոչս 1891 տարուայ, եւ այդ թուականէն մինչ ցվախճան 1894 տարուայ կը հրատարակուին երկու տեղեկագրեր, մին Հոգարարձութեան եւ միւսն Տօք. Եպուպեան Էֆի կողմանէ : Յայնմհետ յաջորդող բժիշկները թէպէտ պատրաստած են իրենց պաշտօնավարութեան ժամանակամիջոցին բժշկական տեղեկագրերը՝ սակայն ցարդ ձեռագիր կը մնան, եւ փոփոպելի է որ Պատասարժան Հոգարարձութիւնը զայնս հրատարակութեան յանձնէ, վերն յիշուած կրկին տեսակէսներով օգտաներն ՚ի նկատի առնելով :

Գ Լ Ո Ի Խ Ա.

Հ Ի Ի Ա Ն Գ Ա Ն Ո Յ

Հիւանդանոցի բժշկական մարմինը. — Հիւանդանոցիս անցելոյն վրայ յետագարձ ակնարկ մը նետելով՝ կը նշմարենք անդ իւր բժշկական մարմնոյն տեսակէտով երեք որոշ ժամանակամիջոց .

Ա. ժամանակամիջոցն որ կ'երկարի հիմնարկութենէն մինչ 1868՝ Տօք. Մատթէոսեանի պաշտօնավարութիւնն՝ յորում ո՛չ կանոնադիր կայ եւ ո՛չ տեղեկագիր : Քիչեր իբր հիւանդ կը զիմեն Ազգ. Հիւանդանոցը (տարեկան շուրջ 200 հոգի) : Հիւանդաց, վիրաւորաց եւ յիմարաց խնամքը միակ բժշկի մը յանձնուած է, որ շատ անգամ օտարական էր. մահերն հիւանդաց թուոյն 0/0 30ը կ'անցնէին ընդհանրապէս : Ա. յս ժամանակամիջոցին՝ ըստ ձերերու վկայութեան՝

(1) Կարեւոր են Տօք. Օրմանեանի տեղեկագրերն որք ցոյց կուտան զայն պատրաստողի ո՛չ միայն իբր ճարտար բժշկի, այլ և վարչական ու գիտական մարդու յատկութիւնները : Պարտք կը համարիմ խորին յարգանօք ողջունել այդ ժրաջան նախորդիս արդիւնաշատ յիշատակը :

անարգ կը համարուէր Ազգ. Հիւանդանոցի բժշկութեան պաշտօնը . կարող բժիշկներ չէին ուզեր ստանձնել զայն : Հայազգի անուանի բժիշկներ լսկ կ'անդամակցէին Հոգարարձական մարմնոց, սակայն դարմանողի դեր չէին ուզեր ստանձնել : Այս վիճակն ունէր Ազգ. Հիւանդանոցն՝ երբ 1866ի Հոգարարձութիւնը կազմուեցաւ , որոյ անդամակից Տօք. Մատթէոսեան պատրաստեց Հիւանդանոցը պատկերացնող մի տեղեկագիր : Երկու տարի վերջ (1868) , Տօք. Մատթէոսեան կարգուեցաւ այցելու բժիշկ Ազգ. Հիւանդանոցի , ունեւնալով առաջին անգամ մի այցելու ընկեր⁽¹⁾ եւ մի մնայուն օժանդակ բժիշկ⁽²⁾ :

Բ. Ժամանակամիջոցը կը սկսի Տօք. Մատթէոսեանի պաշտօնավարութեան օրէն (1868) եւ կ'երկարի մինչեւ 1891 : Այս 23 ամեայ ժամանակամիջոցի առաջին տասը տարիներուն Հիւանդանոցը ունէր երկու այցելու բժիշկ ⁽³⁾, բայց ոչ աշխատութեան բաժանմամբ , եւ մի մնայուն օժանդակ ⁽⁴⁾ : Ապա կրկին ունեցաւ մէկ այցելու ⁽⁵⁾ եւ մէկ օժանդակ մնայուն բժիշկ ⁽⁶⁾ :

Այս ժամանակամիջոցին մէջ՝ առաջնոյն բաղդատմամբ աւելի կանոնաւորութիւն կայ բժշկական ծառայութեանց մէջ , որոյ հետեւանօք անդ զխնող հիւանդաց թիւը տարուէ տարի կ'աւելնայ եւ կը հասնի մինչ տարեկան շուրջ 1000 հիւանդի , տալով հետզհետէ աւելի լաւ արդիւնք եւ միայն 0/0 25-20 եւ հուսկ ուրեմն 0/0 15 մահ :

Գ. Ժամանակամիջոցը կը սկսի բժշկական ծառայութեանց երկուքի բաժանմամբ՝ Բժշկական եւ Վիրաբուժական, որ տեղի կ'ունենայ Տօք. Եաղուպեանի պաշտօնի կոչմամբ (1891 Յուլիս 1) : Իւրաքանչիւր բաժին ունէր իւր պեան յանձին Տօք. Հիւնքեարպէյէնտեանի եւ Տօք. Եաղուպեանի , իւրաքանչիւրն ունենալով իւր օժանդակը ⁽⁷⁾ : Յիմարայ խնամքն եւս Ներքին հիւանդութեանց բժշկին յանձնուած էր :

(1) Նախ Տօք. Մինասեան եւ ապա Տօք. Մոզեան :

(2) Տօք. Վահունի եւ ապա Տօք. Նահապետեան :

(3) Տօք. Մատթէոսեան եւ Տօք. Մոզեան (1868—1872), Տօք. Մոզեան եւ Տօք. Իւթիւնեան (1872—1878) :

(4) Տօք. Նահապետեան :

(5) Տօթ. Ռափայէլեան (1878—1880), Տօք. Օրմանեան (1880—1889), Տօք. Հիւնքեարպէյէնտիեան (1889—1891) :

(6) Միշտ Տօք. Նահապետեան :

(7) Տօք. Նահապետեան եւ Տօք. Պալեան :

Յիմարարութեան բաժինն եւս անջատելու պէտքն զգացուելով՝ 1892 Մայիսին Տօք. Գասպարեան այդ ճիւղի բժիշկ կը կարգուի եւ այդ օրէն բաժնուած կ'ըլլան Հիւանդանոցիս բժշկական երեք ճիւղերը, Բժշկական, Վիրարութեան եւ Յիմարարութեան, ունենալով իւրաքանչիւրն իւր բժիշկ պեան (1) եւ օժանդակը (2) :

Որբանոցի բժշկական այցելութիւնն յանձնուած էր ցարդ օժանդակ բժշկաց խնամոց, ներկայ տարւոյս Մարտէն սկսեալ Տօք. Նահապետեան Մանչերու որբանոցի այցելու բժիշկ կարգուեցաւ, իսկ Աղջկանց որբանոցը կ'այցելէ Ներքին հիւանդութեանց բժիշկը :

Ուստի այժմ հաստատութեանս բժշկական մարմինը կը բաղկանայ եօթը բժիշկներէ :

* * *

Հիւանդանոցիս բաժանումները. — Հիւանդանոցս (առանց հաշուելու Յիմարանոցը) շուրջ 225 անկողին ունի եւ երկու որոշ ճիւղերու բաժնուած է, Ներքին կամ Բուռն բժշկական 150 անկողին, եւ Արտաքին կամ Վիրարութեան 75 անկողին :

Արանց ներքին հիւանդութեանց բաժինն 7 սրահներէ եւ մասնաւորի 4 սենեակներէ կը բաղկանայ, ըստ յետագային բաժնուած .

1. Խորենացոյ սրահ . — Ջերմոտ հիւանդներ	13 անկողին
2. Մեծն Ներսէսի սրահ . — Սուր հիւանդներ	20 »
3. Ս. Գրիգորի սրահ . — Երկարատեւ հիւանդներ	22 »
4. Ս. Մեսրոպի սրահ. — Ս. աստիճանի ուռականութիւն	10 »
5. Ս. Սահակայ սրահ . — Բ. եւ Գ. աստիճանի թոքային ուռականութիւն	10 »
6. Ս. Շնորհալիի սրահ . — Յիմար հիւանդներ	10 »

(1) Տօք. Հինքեարպէյէնտի 1891ի վերջերն հրաժարելով Ներքին հիւանդութեանց պեան պաշտօնէն, նոյն պաշտօնը անոր տեղ վարեցին Տօք. Նահապետեան (մինչ 1895), Տօք. Թիրեարեան (մինչ 1897), կրկին Տօք. Նահապետեան (մինչ 1899 Մարտ 2) և ապա ետ — Տօք. Եաղուպեան 1891ի Յունիսին հրաժարելով իրեն կը յաջորդէ Տօք. Էլմասեան (մինչ ցվերջ կոյս տարւոյն) և ապա Տօք. Չարգարեան որ ցարդ կը շարունակէ : — Տօք. Գասպարեան հրաժարելով 1893ի Յունիսին ժամանակ մը Ներքին հիւանդութեանց բժիշկներու խնամոց կը յանձնուին յիմարներն և 1891ի Յունիսին Տօք. Մոնճէրի կը կարգուի այս բաժնի պետ :

(2) Այս ժամանակահիշոցին մէջ իւր օժանդակ բժիշկ պաշտօնավարեցին Տօք. Նահապետեան, Տօք. Թաշճեան, Տօք. Պալեան, Տօք. Իշլէմէճեան, Տօք. Մուծաֆեան, Տօք. Խորխոռունի Այժմու օժանդակ բժիշկներն են Տօք. Բարաղամեան, Դազազեան և Իփլիքճեան :

7. Ս. Նարեկացիի սրահ (1) . — Անդամալոյծք . . .	16	անկողին
8. Մամաւորի 4 սենեակք . — Երկուքն երկու անկողիննոց եւ երկուքը մէկ անկողիննոց . . .	6	»
	107	»

Կանանց ներքին հիւանդութեանց բաժինը 4 սրահներէ եւ 2 անկողիննոց 2 սենեակներէ կը բաղկանայ .

1. Ս. Գայիանէի սրահ . — Հիւանդ կանայք առ հասարակ	14	անկողին
2. Ս. Շուշանայ սրահ . — Թոքային ուռիանութիւն	5	»
3. Ս. Խորովիդուխաի սրահ . — Տղայք (12 անկողին սրանց 6ը ներքին հիւանդութեանց յատուկ)	6	»
4. Ս. Սանաարուկի (2) սրահ . — Անդամալոյծք . . .	14	»
5. Մամաւորի 2 սենեակ երկու անկողիննոց . . .	4	»
	63	»

Վիրաբուժական բաժինն արանց կողմն ունի 45 անկողին՝ երեք սրահներու բաժնուած եւ երկու խուց , մին 2 եւ մին 1 անկողիննոց , ընդ ամէնն 48 անկողին : Իսկ կանանց կողմն երկու սրահ մին 13 անկողիննոց (Ս. Հոբիսիմէ) եւ միւսն 5 (Ս. Հեղինէ) . Ս. Խորովիդուխա սրահի կէտը (6 անկողին) , եւ երկու մամաւորի սենեակ , մին 2 , մին 1 անկողիննոց , ընդ ամէնն (13+5+6+3) 27 անկողին , որով 48+27=75 անկողին :



Պատճառներին Հիւանդանոցի . — Ըսինք արդէն թէ Հաստատութեանս բժշկական մարմինն 7 բժիշկներէ կը բաղկանայ . առանց հաշուելու Յիմարանոցն ու Որբանոցը՝ բուն Հիւանդանոցն ունի 4 բժիշկ , երկուքն այցելու , երկուքն օժանդակ :

Այցելու բժիշկներս՝ շարաթն երեք անգամ մեր բաժնոցն Վերաբերեալ բոլոր հիւանդները կ'այցելենք՝ ընկերակցութեամբ մեր օժանդակաց , միւս օրերը մեր օժանդակները կ'այցելեն հիւանդները :

Օժանդակ բժիշկներն յաջորդաբար Հիւանդանոց կը մնան գիշերները :

(1) Անդամալոյծներու և Յիմարաց յատկացեալ սրահներն այդ դասակարգերու վերաբերեալ վիրաբուժական հիւանդներ ալ կը պարունակեն , անշուշտ Թուօք նուազ :
 (2) Անդամալոյծներու և յիմարայ յատկացեալ սրահները կը պարունակեն նաեւ այս դասակարգերու վերաբերող վիրաբուժական հիւանդներ :

Ներքին եւ Արտաքին բաժիններու բժիշկներս՝ ի հարկին իրա-
րու կ'աջակցինք եւ ի միասին խորհրդակցութիւններ կը կատարենք :
Բուն Հիւանդանոցի ծառայութենէն զատ՝ երեքշաբթի օրերն
Աղջկանց որբանոցը , շաբաթ օրերն արանց եւ կանանց Մերանոց-
ները կ'այցելեմ , իսկ հինգշաբթի օրերը զրոնքն եկող հիւանդները
կը քննենք :

Տօք. Մօնճէրի շաբաթն 2 անգամ կ'այցելէ . իւր օժանդակն
ամէն օր, իսկ Տօք. Նահապետեան շաբաթն երկու անգամ կ'այցելէ
Մանչերու որբանոցը :

Հաստատութիւնս ունի 2 վճարեալ դեղագործներ եւ 4 օժան-
դակ՝ Ուսանողաց դասակարգէն : Ողջոյն Հիւանդանոցը (Ներքին եւ
Արտաքին բաժինները) բժշկական եւ դեղագործական մարմնէն զատ
ունի 28 պաշտօնեայ , զորս յետագայ ցուցակաւ կը ներկայացնենք
իրենց պաշտօններով .

ԱՐԱՆՑ ԿՈՂՄ

ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԲԱԺԻՆ

Քրիստինէ մայրապետ, ընդհ. հսկող արանց Հիւանդանոցի եւ մասնաւորապէս Ներքին հիւանդութեանց բաժնոյն	1
Վիրադարման ներքին հիւանդութեանց բաժնոյն	1
Ա. աստիճանի հիւանդապահ	2
Բ. աստիճանի հիւանդապահ	2
Գ. աստիճանի հիւանդապահ	4
	<hr/>
	10

ԱՐՏԱՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԲԱԺԻՆ

Արմաւենի մայրապետ հսկող	1
Վիրադարման	1
Ա. աստիճանի հիւանդապահ	1
Բ. աստիճանի հիւանդապահ	1
	<hr/>
	4

ԵՐԿՈՒ ԲԱԺԻՆՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ՊԱՇՏՕՆԵԱՅՆԵՐ

Գիշերապահ	1
Մատակարար	1
Մննդոց բաշխից եւ սպասից լուսացարար	1
Լողանաց սրահի պաշտօնեայ	1
Սափրիչ	1
Դռնապան	1
	<hr/>
	6

Կ Ա Ն Ա Ն Ց Կ Ո Ղ Մ

Սրբուհի մայրապետ , ընդհ. հսկող եւ մասնաւորապէս Վիրաբուժական բաժնի	1
Աղաւնի մայր. ընդհ. հսկող Ներքին հիւանդութեանց բաժնի	1
Օր. Մաղթիկ , հանդերձապահ	1
Հիւանդապահ Ներքին հիւանդութեանց	1
Հիւանդապահ Արտաքին հիւանդութեանց	1
Հիւանդապահ Անդամայոյժներու սրահին	1
Մենդոց բաշխից եւ սպասից լուացարար	1
Դռնապան	1

8

Հիւանդանոցի պաշտօնէից թիւը բաւական է . աւելի բազմութիւնն ոչ թէ առաւելութիւն չունի՝ այլ եւ կրնայ իսկ վնասել :

Ստէպ դժուարութիւն կ'ունենանք կարող եւ խղճահար հիւանդապահներ ունենալու համար . վերջապէս կարողացանք Արանց բաժնոյն համար յարմարագոյն հիւանդապահներ ունենալ կամ պատրաստել . Կանանց բաժնոյն համար դժուար է այդ եւ հակառակ մեր սկզբան մեր այժմու դորձածած հիւանդապահներէ երկուքն առանց վարձքի պատասպարեալներ են . եւ անշուշտ , սուաջին սովիւ , անոնց տեղ վճարեալ հիւանդապահուհիներ պիտի կարգենք՝ երբ որ կարենանք գտնել :

* * *

Բարեկարգութիւնք . — Բերկրութեամբ կ'ըսեմ թէ այս տան ամսուան ժամանակամիջոցին աւելի բարեկարգութիւնք կրցան իրագործուիլ Հիւանդանոցիս մէջ՝ քան այլ տասը տարիներու մէջ , որոց զլիսաւ որն է , Այի ջուր ունենալն որոյ վասն Աղզը Պատուարժան Հոգարարձութեանդ եւ Ձեզ աջակից Ազնուաշուք Ասլանեան Յարութիւն էֆ.ի երախտադարտ պիտի մնայ , զի այս միջոցաւ ամառնային չոր եղանակին դրոէն ջուր ճարելու դժուարութենէն ազատած եղաք Աղզային այս կարեւոր Հաստատութիւնը :

2. Հաստատութեան ամէն յարկերն ու անկիւններն ունեցան իրենց ջուրի պէտքը գոհացնելու աղբիւրներ եւ ծորակներ :

3. Թեքնո-սիֆօնի հաստատութեամբ արանց Հիւանդանոցի , Յիմարանոցի եւ Մերանոցի ամէն յարկերը , մասնաւոր խողովակներու միջոցաւ կ'ունենան պէտք եղած տաք ջուրն , առանց հեռի-

ները դիմելու : Քիչ օրէն կանանց Հիւանդանոցը , Ծերանոցը , Յիմարանոցն եւ Աղջկանց որբանոցը պիտի ունենան միեւնոյն բարեբաղդութիւնը :

4. Արանց եւ կանանց Հիւանդանոցն եւ աղջկանց Որբանոցը շնորհիւ Բասաէօնեան կատարելագործեալ զտիշներու՝ ամենամաքուր ըմպելի ջուր ունեցան :

5. Արանց հիւանդանոցն օժտուեցաւ Զրաբուժական (Hydrothérapique) սրահով մը, յորմէ զուրկ էր ցարդ : Զրաբուժական տարրական սրահ մ'ալ հաստատուեցաւ բաղանիքի մէջ : Քիչ օրէն կանանց Հիւանդանոցն ալ պիտի ունենայ իր Զրաբուժական սենեակը :

6. Կանանց Հիւանդանոցն եւ Աղջկանց Որբանոցն օժտուեցան նոր դրութեամբ՝ առանց գարշահասութեան՝ ճեմիշներով : Փափագելի է որ նոյնն իրագործուի եւ արանց Հիւանդանոցի ու Ծերանոցի կողմը :

7. Հաստատութեանս բոլոր յարկերն հետաձայնի թելերով հաղորդակցութեան գրուեցան Տնօրէնութեան սենեակին հետ, եւ այսպէսով առաջքն առնուեցան կարգ մը վարչական դժուարութեանց :

8. Յիմարաց օր քան զօր աճման հետեւանօք շուրջ 40 յիմարներ գիշերային հանգստի օրոշ եւ պատշաճ տեղ շունկին , մասնաւոր յարկի մը շինութեամբ այդ 40 զրկեալներն առողջապահիկ բնակարան մը ունեցան :

9. Հիւանդանոցն օժտուեցաւ մէզերու տարրալուծման յատուկ մի տարրական աշխատանոցով , որ մեծ ծառայութիւն կը մատուցանէ հիւանդաց բժշկական ծառայութեանց : Աւելի նպաստաւոր պիտի ըլլայ անշուշտ այս աշխատանոց՝ եթէ ունենայ իր ապսպրուած մանրացոյցն , յորժամ պիտի կրնայ եւ Մանրէարանական մի ճիւղ ունենալ՝ հիւանդաց խուխերու , մէզերու մլուրի եւլն. մանրէարանական քննութեանց համար :

10. Մննդոց բաշխման յատուկ Բարիզէն բերուած երկու կառքերու շնորհիւ Արանց կողմի հիւանդները կրնան կանոնաւորապէս , դիւրութեամբ եւ տաք ընդունիլ իրենց անուղն , առանց տեղի տալու պաշտօնէից գեղձմանց : Փափագելի է որ այս կառքերէն մէկ հատ եւս բերուի կամ աստ շինուի կանանց Հիւանդանոցի համար :

11. Արանց եւ կանանց Հիւանդանոցի մէջ իսկ ունեցանք Տարրական դեղարաններ՝ անմիջական եւ կարեւոր դեղօրէկից համար, որով որեւէ անհրաժեշտ պէտքի հանդէպ մինչ ցղեղարան երթեւեկներու առաջքն առնուեցաւ :

12. Կանայք՝ վիրաց դարմանի խուց եւ մասնաւոր անկողին չունենալու՝ իրենց անկողիններուն մէջ եւ ՚ի տես ամէն հիւանդաց տեղի կ'ունենային անոնց դարմանումն : Ունեցանք այժմ առ այս մի խուց եւ Կանախտարուժական անկողին մը , որով այդ անպատեհութեանց առաջքն աւնուեցաւ :

13. Հիւանդաց ընթերցման համար մասնաւոր Մատենադարան մ'ունեցանք :

14. Արանց Հիւանդանոցն օժտուեցաւ պատշաճ Հիւրանոց սենեակով մը , ուր պահ մը հանգիստ կրնան աւնուլ այցելու հիւրերը :

15. Ելեքտրարուժութիւնը հաստատեցինք Հիւանդանոցիս մէջ :

16. Մարձարուժութեան (Massage) վարժեցուցինք վիրադարմաններն եւ այդ արդիւնաշատ դրութիւնը հաստատեցինք :

17. Մատակարարութեան խուց մը հաստատեցինք Հիւանդանոցիս մէջ իսկ , ուր կը պատրաստուին հիւանդաց սննդոց եւ այլ պիտոյից մատակարարութեան ցուցակները :

18. Հիւանդաց ջերմագրութեան համար մասնաւոր թերթեր պատրաստել տուինք , որոց շնորհիւ հիւանդաց ջերմի վիճակը կը պատկերանայ :

19. Անդամալոյժներն ընդարձակ սրահի մը մէջ հաւաքեցինք. անոնց նկատմամբ մասնաւոր խնամքներ սահմանուեցան :

20. Ունեցանք կիւրակէ օրերը Հաստատութիւնս ճրիապէս այցելող ատամնարոյժ մը :

21. Հիւանդաց սրահներու համար ճաշի սեղաններ պատրաստել տուինք՝ որոց վրայ կը ճաշեն անկողնէն հեռանալու կարող հիւանդները , ինչպէս առաջ ամէն ոք անկողնոյն մէջ կը ճաշէր :

22. Յիմարաց առանձնացման սենեակներն ինչ ինչ փոփոխութեանց ենթարկելով՝ աւելի լաւ վիճակի վերածեցինք :

23. Մեռելոց ի գերեզմանատուն փոխադրութիւնը մասնաւոր կառքով մը տեղի կ'ունենայ՝ փոխանակ յիմարաց միջոցաւ հեռիտան ղրկուելու :

24. Գործողութեան ենթարկեալ հիւանդաց տեղափոխութեան համար մասնաւոր կառք մը շինել տուինք :

Իրագործուեցան եւ այլ կարգ մը երկրորդական բարեփոխութիւնք զորս աւելորդ կը համարիմ թուել աստ :

Կան զեռ , բաց ի որոշեալ եւ ի մօտոյ գործադրելի կարգ մը կարեւոր պէտքերէ , որպէս մանրացոյց , կանանց բաժնին համար սննդոց բաշխման կառք , արանց ճեմիչներու եւրոպական դրու-

թեան վերածում , եւ այլն , խնդրոյ առարկայ եղող ինչ ինչ բարեկարգութիւնք , որպէս

1. Ջեռոց (Etuve) մը հիւանդաց եւ մանաւանդ տարափոխիկ հիւանդութեանց ենթարկեալներու՝ անկողնոց, առարկայից եւ զգեստեղինաց հականեխումը կատարելու համար :

2. Լուսանկարի դործի մը՝ երբեմն կարեւոր հիւանդաց նախկին եւ վերջին վիճակը լուսանկարելու համար :

3. Յիմարաց պարտէզից մէջ տաղաւարներու հաստատութիւնը զայնս ընդ դէմ Արեւական պաշտպանելու համար :

4. Ներկայիս պահանջից համաձայն ընդհանուր կանոնադրութիւն մը խմբագրել :

5. Աշխատանոցի պետ մը (chef de laboratoire) կարգել ու անոր յանձնել քիմիաբանական տարրալուծութիւնները , մանրէաբանական քննութիւնները , լուսանկարչական աշխատութիւններն եւ Հիւանդանոցին յատուկ բժշկապիտական փորձերն ու աշխատութիւնները :

6. Աչքի , կոկորդի եւ ականջի հիւանդութեանց բաժին մը ստեղծել :

7. Ափրողիտեան հիւանդութեանց բաժին մը սահմանել : Առ այս մանաւորապէս պիտի խօսինք քիչ մը վերջ :

Գ Լ ՈՒ Խ Բ.

Հ Ի Ի Ա Ն Գ Կ

Հիւանդաց թիւը . — Տարւոյս շրջանին մէջ Ա.զ.գ. Հիւանդանոցի մէջ դարմանուած են 1638 անձինք , սակայն այս տարւոյ մեր պաշտօնաւարութեան տասն ամիսներուն՝ Մարտ 2էն ցվերջ տարւոյս՝ ընդունուած են միայն 1348 հիւանդք : Ողջոյն տարւոյն ընթացքին՝ Ներքին հիւանդութեանց բաժնոյն մէջ խնամուած են 1076, իսկ Արտաքին՝ վիրաբուժական հիւանդութեանց բաժնոյն մէջ 562 հոգի : 45 հիւանդներ միանգամայն թէ՛ Ներքին եւ թէ՛ Արտաքին հիւանդութեանց բաժիններու մէջ խնամուած են՝ տարբեր հիւանդութեանց համար : Չոր օրինակ թոքատապի ենթակայ մը այս

հիւանդութիւնէ բուժուելէ վերջ՝ իւր Հիւանդանոց մուտքէն օգտուելով՝ կը դիմէ Արտաքին հիւանդութեանց բաժնոյն՝ իւր մի վազեմի ազեթափութեան համար գործողութեան մը ենթարկուելու փափաքանօք⁽¹⁾ : Այս թիւը հաւանականաբար ճշմարտութենէ նուազ է , զի ցարդ մէկ բաժինէն միւսն անցնողներու հիւանդաթերթերը չէին փոխուեր , որով գրասենեկից մէջ վիճակացուցական սխալներ կրնային պատահիլ . ասոնց առաջքն աւնելու համար որոշեցինք այժմ հիւանդաթերթերը փոխել իւրաքանչիւր բաժիններու մէջ :

Մեր տասնամեայ պաշտօնավարութեան ժամանակամիջոցին մեր բաժնոյն մէջ ընդունուած հիւանդաց գումարն է 925, որոց 710ն այր եւ 215ը կին , որ աւելցնելով մեր Մարտ 2ին պատրաստ գտած 92 հիւանդներու (67ն այր , 25ը կին) կ'ունենանք 1017 հիւանդ .

Պատրաստ	Այր	67	—	Կին	25	—	Գումար	92
Մուսֆ	»	710	—	»	215	—	»	925
							»	<u>1017</u>

Այս հաշուէն դուրս կան նաեւ Հաստատութեանս բժշկաց կողմանէ սաքի վրայ դարմանուող շատ մը պաշտօնեաներ , եւ դրսէն՝ Հաստատութեանս բժշկաց խորհրդակցութեան գիմողաց բազմութիւնը :

Այս հիւանդներն ո՞ւստի եկած են . — Այս 925 հիւանդներու 673ը դրսէն եկած են , իսկ 252ը Հաստատութեանս զանազան յարկերէն , զորս յետագայ ցուցակաւ կը պատկերացնեմ .

Որբանոցէն	Այր	38	—	Կին	42	—	Գումար	80
Պատճօնեայ	»	16	—	»	9	—	»	25
Մերանոցէն	»	50	—	»	22	—	»	72
Յիմարանոցէն	»	51	—	»	24	—	»	75
							»	<u>252</u>

Հիւանդաց հայրենիք . — Հիւանդանոց դիմող 1017 անձերու 428ը տեղացիներ են , իսկ 589ը դրսեցիներ՝ որոց աւագ մեծամասնութիւնը Թուրքիոյ գաւառներէն , իսկ փոքր մի մասն օտարահպատակ Հայեր են : Եղած են մի քանի օտարազգիներ ալ , ընդհանրապէս դրսեցի :

(1) Այս 45 անձերը պարտ էին բարդուիլ և երկու դասակարգի հիւանդաց Թուոյն վրայ , մինչդեռ այժմ միայն վերջին տեւեր մնացած բաժնոյն մէջ արձանագրուած են :

Ո՞ր ամսոց մէջ աւելի հիւանդ կ'ընդունինք. — Մեր տասնամասնայ պաշտօնաւարութեան ժամանակամիջոցին հիւանդարան դիմող 925 անձերն՝ ըստ ամսոց՝ յետագայ ցուցակաւ կը ներկայացնենք .

					475
Մարտ	86	Օգոստոս	87
Ապրիլ	87	Սեպտեմբեր	101
Մայիս	103	Հոկտեմբեր	91
Յունիս	88	Նոյեմբեր	83
Յուլիս	111	Դեկտեմբեր	88
		<u>475</u>			<u>925</u>

Արդ այս ցուցակէն կը տեսնուի որ ամէն ամսոց մէջ հիւանդներ գրեթէ հաւասար են եւ կամ տաք ամիսներու մէջ փոքր ինչ աւելի են քան ցուրտ եղանակին . սակայն այս տարբերութիւնները փոքր են եւ ներելի չէ եզրակացուիլուն մը հանել այս տասնամասնայ թիւերէն՝ յաջորդ տարիներու տեղեկագրերը միայն կարող պիտի ընեն մեզ վճիռ արձակել . դիտել տանք միայն թէ՛ Տօք. Օրմանեան իւր քառամեայ տեղեկագրով իսկ չէ հասած առ այս որոշ եզրակացութեան մը :

Հիւանդաց սեռը . — Ընդհանուր առմամբ մեր հիւանդաց $\frac{3}{4}$ -ն այրեր կը ներկայացնեն եւ $\frac{1}{4}$ -ը կիներ, գրեթէ նոյն համեմատութիւնը կուտան մեր 1017 հիւանդները . արդարեւ կիները քիչ անդամ կը դիմեն Ազգ. Հիւանդանոցս , եւ դիմողները շատ անգամ բոլորովին անոք եւ անպաշտպան ծերունիներ են :

Պատահած	Այր	67	—	Կին	25	—	Գումար	92
Ընդունուած	»	<u>710</u>	—	»	<u>215</u>	—	»	<u>925</u>
		777			240			1017

Հիւանդաց տարիքը . — Մեր խնամած 1017 հիւանդներն ըստ իրենց հասակի դասակարգելով կ'ունենանք յետագայ ցուցակը .

1էն 10 տարեկան	53
11էն 20	»	133
21էն 30	»	145
31էն 40	»	141
41էն 50	»	154
51էն 60	»	200
61էն 70	»	106
71էն 80	»	72
81էն 90	»	13
		<u>1017</u>

Այս ցուցակէն դիւրին է հետեւցնել թէ՛ Հիւանդանոց դիմողներն աւելի 51—60 տարեկաններն են, ապա կուզան 41—50 տարեկանները, յետոյ 21—30 եւ 31—40 տարեկանները, վերջը 11—20 տարեկան պատանիներն՝ որոց մեծ մասն Որբանոցը կը մատակարարէ. եւ եթէ Հաստատութեանս մէջ որբանոց մը չունենայինք, անչուշտ ասոնց թիւը վաթսուներամեայ եւ ութսունամեայ ծերերէ վերջը պիտի դար : 1—10 տարեկան հիւանդներն Որբանոցիս յատուկ են գրեթէ ամբողջութեամբ : Խոր ծերութեան հասնողներու թիւի նուազութիւնը՝ կենաց տեւողութեան օր քան զօր նուազելուն ապացոյց մ'է :

Ընդհանուր առմամբ գաւառացիներն աւելի երիտասարդ հիւանդներ կը մատակարարեն մեզ, իսկ պղտեցիներն աւելի ծերեր եւ անպաշտպաններ, նա մանաւանդ կիներն : Այս արդիւնքն բնական էր արդարեւ՝ գաւառացիներ երիտասարդութեան եւ կամ չափահասութեան ասան պանդխտութեան կը դիմեն եւ ընտանիք չունենալով Հիւանդանոցը կը խնամուին, իսկ պղտեցիներն իրենց ընտանեաց մէջ կը խնամուին եւ միայն անտէր ծերերը Ազգին Տունը կը դիմեն :

Գ Լ ՈՒ Խ Գ.

Հ Ի Ի Ա Ն Գ ՈՒ Թ Ի Ի Ն Ք

Ընդհանուր ցուցակ դարմանեալ հիւանդութեանց. — Աստ ցուցակաւ մը կը ներկայացնենք մեր տասնամեայ պաշտօնավարութեան ժամանակամիջոցին դարմանուած հիւանդներն ու անոնց ելքն, ըստ դիտութեան դասակարգելով այդ հիւանդութիւնները :

Ի ստորեւ նշանակուած ցուցակէն կը տեսնուի թէ՛ այս տասնամեայ ժամանակամիջոցին խնամեալ 1017 անձերէ 496ը կատարելապէս բժշկուած են, 185ը բարւոքեալ, 28ն առանց կարեւոր փոփոխութեան արձակուած եւ 205ը մեռեալ. Յունուար 1ին կային 103 անձեր պատրաստ եւ ի դարմանի : Այս արդեանց վրայ պիտի անդրադառնանք վերջը :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱԿ ԴԱՐՄԱՆԵԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ՇՆՁԱՌԻՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ	Պատրաստ	Ընդունում	Բովանդակություն	Բժշկելով	Բարւոքելով	Արձակելով	Մեռելով	Պատրաստ
	Մաս 2	Ընդունում	Բովանդակություն	Բժշկելով	Բարւոքելով	Արձակելով	Մեռելով	Ցուցում 1
Ուռախան խոչառուց (Laryngite tuberculeux)	1	5	6	0	1	1	3	1
Ֆռանկախոտային խոչառուց (Laryngite syphilitique)	0	2	2	1	1	0	0	0
Խոչակի ալոտոյ (պոլխ) (Tumeur de larynx)	0	1	1	0	1	0	0	0
Սուր ցնդառուց (Bronchite aiguë)	5	67	72	70	2	0	0	0
Տեւախան ցնդառուց (Bronchite chronique)	1	13	14	3	2	0	2	7
Ցնդաթորառուց (Bronchopneumonie)	0	2	2	1	0	0	1	0
Կապուտ հազ (Coqueluche)	1	1	2	2	0	0	0	0
Ջրմա (Asthme)	1	5	6	5	1	0	0	0
Թորային փրուռոյց (Emphysème pulmonaire)	0	8	8	0	4	1	1	2
Թորային արեւնակուտում (Congestion pulmonaire)	0	1	1	0	0	0	1	0
Ուռախան արեւնաթրում (Hémoptysie tuberculeux)	0	1	1	1	0	0	0	0
Թորային քաղցկեղ (Gangrène pulmonaire)	0	2	2	0	0	0	2	0
Թորառուց (Pneumonie)	6	15	21	14	1	0	1	5
Թորային ուռախանութիւն եւ Մաշարէական ախտ (Tub. Pulmonaire et Phtysie)	13	102	115	1	57	4	42	11
Պանրառուց Թորառուց (Pneumonie caséuse)	0	2	2	0	0	0	2	0
Թորաւզնառուց (Pleurite)	1	15	16	14	0	0	0	2
Ջրգոյութիւն Թորաւզնի (Pleurésie)	0	7	7	4	0	0	0	3
Ջրգոյութիւն լանչաց (Hydrothorax)	0	2	2	0	1	1	0	0
Ջրոդականութիւն լանչաց (Hydropneumothorax)	0	1	1	0	1	0	0	0
	29	252	281	116	72	7	55	31
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ԱՐԵԱՆ ՇՐՁԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ								
Սրտակրանառուց (Péricardite)	0	1	1	1	0	0	0	0
Գերաճում սրտի (Hypertrophie du cœur)	0	1	1	0	1	0	0	0
Թերակծկում սրտի (Asystolie)	0	4	4	1	1	0	0	2
Ներքնաւզառուց սրտի (Endocardite)	0	2	2	0	2	0	0	0
Անբաւականութիւն սրտի խոյրաձեւ դռնակի (Insuffisance du valvule mitrale)	4	5	9	2	3	0	2	1
Անձկութիւն սրտի խոյրաձեւ դռնակի (Rétr. mitrale)	2	7	9	0	8	0	1	0
Անբաւականութիւն եւ անձկութիւն սրտի խոյրաձեւ դռնակի (Rétr. et Ins. mitrale)	3	9	12	0	4	0	5	3
Անբաւականութիւն մայր շնչերակի (Ins. aortique)	0	3	3	0	3	0	0	0
Անձկութիւն մայր շնչերակի (Rétr. aortique)	1	0	1	0	1	0	0	0
Ընդհատականութիւն եւ անկանոնութիւն սրտի բարբախմանց (Intermit. et Irrégul. des bat. du cœur)	0	2	2	0	2	0	0	0
Երագարադիտում սրտի (Tachycardie)	0	1	1	0	1	0	0	0
Կրծաւզձուկ (Angine de poitrine)	0	2	2	0	0	0	2	0
Կեղծ կրծաւզձուկ (Fausse angine de poitrine)	0	1	1	0	1	0	0	0
Կարծրութիւն շնչերակաց (Artério sclérose)	1	6	7	1	4	0	0	2
Ներքին տեւատեսութիւն (Hémorroïde interne)	0	6	6	6	0	0	0	0
	11	50	61	11	31	0	11	8
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿԻ								
Բերանառուց (Stomatite)	0	1	1	0	0	1	0	0
Բաւրկիկ (Muguel)	0	4	4	4	0	0	0	0
Սուր փողայաւ (Angine aiguë)	0	12	12	12	0	0	0	0
Նշկառուց (Amygdalite)	0	1	1	1	0	0	0	0

	Պատրաստ Մաս 2	Ընդունում ընդամենը	Բովանդակ ություն	Բժշկել	Բարւոյնել	Արձակել	Մեռել	Պատրաստ Յուրանում
Սուր որկորառաւայ (Gastrite aiguë)	0	7	7	6	0	0	0	1
Տեւական որկորառաւայ (Gastrite chronique)	0	2	2	0	1	0	0	1
Դժուարաւարսութիւն (Dyspepsie)	1	16	17	15	1	0	0	1
Ընդլայնում որկորի (Dilatation de l'estomac)	0	12	12	10	1	1	0	0
Որկորակեղ (Ulcère de l'estomac)	0	1	1	0	0	1	0	0
Խիիրդ որկորի (Cancere de l'estomac)	0	4	4	0	0	0	3	1
Որկորայաւ (Gastralgie)	0	5	5	4	1	0	0	0
Կրծիկն ստամորսի (Embarras gastrique)	1	33	34	31	0	0	0	3
Խանգարումն որկորի եւ աղեայ (Trouble gastro-intestinale)	0	15	15	14	0	0	0	1
Յարատեւ ջերմ (Fièvre continue)	0	7	7	7	0	0	0	0
Անխորժութիւն (Anorexie)	0	1	1	1	0	0	0	0
Սուր աղեայ (Entérite aiguë)	5	27	32	32	0	0	0	0
Տեւական աղեայ (Entérite chronique)	6	29	35	2	1	1	27	4
Ուռական աղեայ (Entérite tuberculeux)	1	18	19	0	1	0	17	1
Կեղծաճաղանձային աղեայ (Entérite pseudo-membraneuse)	0	2	2	2	0	0	0	0
Թանջրատիւ աղեայ (Entérite dysentérique)	0	2	2	2	0	0	0	0
Թանջր (Dysentérie)	1	11	12	10	0	0	2	0
Խցումն սորի (Obstruction du pylore)	0	1	1	0	0	0	0	1
Աղեղարձ (Occlusion intestinale)	0	1	1	1	0	0	1	0
Խիթ աղեայ (Colique intestinale)	0	8	8	8	0	0	0	0
Պնդութիւն (Constipation)	0	8	8	8	0	0	0	0
Երկորդ (Tœnia)	0	1	1	1	0	0	0	0
Աղերտտա (Ascaride lombricoïde)	0	1	1	1	0	0	0	0
	15	230	245	171	6	4	50	14
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ								
ԼԵԱՐԴԻ, ՓԱՇԱՂԻ, ԵՒ ՈՐՈՎ. ԵՃԱԹԱՂԱՆԹԻ								
Դեղնութիւն (Ictère)	0	2	2	0	1	1	0	0
Ճարպային վատաւերում լեարդի (Dégénérescence graisseuse du foie)	0	1	1	0	0	0	1	0
Ծիրակաւան լեարդախտ (Cirrhose atrophique)	1	3	4	0	3	0	1	0
Գերաճական լեարդախտ (Cirrhose hypertrophique)	0	1	1	0	1	0	0	0
Խիիրդ լեարդի (Cancere du foie)	0	3	3	0	1	0	2	0
Գերաճում փայծաղի (ճանճախտի հետեւանօր) Hypertrophie de la rate (suite de paludisme)	0	3	3	2	0	0	1	0
Փայծաղայաւ (Splénalgie)	0	1	1	1	0	0	0	0
Փորաչրդոդութիւն՝ ծիրակաւան լեարդախտի հետեւանօր (Ascite suite de cirrhose atrophique)	0	1	1	0	0	0	1	0
Փորաչրդոդութիւն ճանճախտային (Ascite paludeene)	0	1	1	0	0	0	1	0
Փորաչրդոդութիւն որովայնային շճաժաղանձի ուռականութեան հետեւանօր (Ascite suite de tuberculose méso-entérique)	0	1	1	0	1	0	0	0
Ուռականութիւն որովայնային շճաժաղանձի (Péritonite tuberculeuse)	0	3	3	0	0	0	2	1
	1	20	21	3	7	1	9	1
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ								
ՄԻՋԱՅԻՆ ԵՒ ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՅ								
Սուր երիկամառաւայ (Néphrite aiguë)	0	3	3	3	0	0	0	0
Երկարատեւ երիկամառաւայ (Néphrite chronique)	2	10	12	0	2	1	4	5
Միզածիւնաւորում (Urémie)	0	1	1	0	0	0	1	0
Երիկամային խիթ (Colique néphrétique)	0	1	1	1	0	0	0	0

	Պատրաստ վարս 2	Ընդունում ընդունում	Բովանդակ- ություն	Բժշկել վա	Բարորակ վա	Արձակել վա	Մեռել վա	Պատրաստ Յուրուար 1
Փակիչտատայ (Cystite)	0	6	6	3	1	0	1	1
Անիզակարումիւն (Incontinence d'urine)	0	2	2	1	1	0	0	0
Միզարգելումիւն (Rétention d'urine)	0	1	1	1	0	0	0	0
Դժուարամիզումիւն (Difficulté d'uriner)	0	1	1	1	0	0	0	0
Մզկատայ (Urétrite)	0	2	2	2	0	0	0	0
Շագանակագեղձատայ (Prostatite)	1	1	2	2	0	0	0	0
Երազափորձումիւն (Pollution nocturne)	0	3	3	0	1	0	0	2
Ձուարփողատայ (Salpingite)	0	1	1	0	1	0	0	0
Ձուարափողատայ (Salpingo-ovarite)	0	1	1	0	1	0	0	0
Դաշտանատումիւն եւ Դժուարադաշտան (Aménorrhée et Dysménorrhée)	0	2	2	1	0	0	0	1
ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆՔ ՋՂԱՅԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ	3	35	38	15	7	1	6	9
Ուռական խելայատակատայ (Ménin. tuberculeux)	1	1	2	0	0	0	2	0
Թորատայի մանրէնէրէ առձեալ խելայատակատայ (Meningite à pneumocoque)	0	1	1	1	0	0	0	0
Ուղեղային արենակուտում (Congestion cérébrale)	0	9	9	2	1	0	6	0
Ուղեղային անարիւնումիւն (Anémie cérébrale)	1	2	3	2	1	0	0	0
Ուղեղային արենահոտումիւն (Hémorragie cérébrale)	1	11	12	3	1	0	8	0
Ընդհանուր անդամալուծումիւն (Paralysie générale)	0	5	5	0	1	1	2	1
Ուղեղային կակուումիւն (Ramollissement cérébrale)	0	1	1	1	0	0	0	0
Մանկական երկարատեւ զանկուղեղատայ (Encéphalite chronique infantile)	0	1	1	0	0	0	1	0
Ուղեղային զնյում (Commotion cérébrale)	0	1	1	1	0	0	0	0
Անխոտումիւն (Aphasie)	1	1	2	0	1	1	0	0
Ցրանկախտային ողնուղատայ (Myélite syphilitique)	1	1	2	0	1	0	1	0
Երկարատեւ ողնուղատայ (Myélite chronique)	2	5	7	0	2	0	2	3
Ընթացային անկատումիւն (Ataxie locomotrice)	2	6	8	0	3	2	1	2
Ցրէտրիխի հիւանդումիւն (Maladie de Friedrich)	0	1	1	1	0	0	0	0
Ստնգական անդամալուծումիւն (Paral. spasmodique)	0	1	1	0	1	0	0	0
Կիտահարումիւն (Hémiplégie)	5	23	28	3	8	4	6	7
Միջնահարումիւն (Paraplégie)	2	7	9	0	5	0	2	2
Մամահարումիւն (Monoplégie)	0	1	1	0	0	0	1	0
Ջղացաւումիւն եռորեակեան ջղից (Névr. de trijumeau)	0	1	1	1	0	0	0	0
Ջղացաւումիւն զիտաչի (Névralgie sciatique)	1	14	15	14	0	0	0	1
Արտաջղատայ (Névrite périphérique)	0	8	8	5	2	0	0	1
Ծիրոււն տեսողական ջղից (Atrophie des nerfs opt.)	0	1	1	0	0	1	0	0
	17	102	119	34	27	9	32	17
ՋՂԱԳՐԳՌԱԿԱՆ ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆՔ								
Անգար (Migraine)	0	1	1	1	0	0	0	0
Գլխայաւումիւն (Céphalalgie)	0	4	4	4	0	0	0	0
Ջղախոտումիւն (Névrosthénie)	0	9	9	4	4	0	1	1
Լուսնոտումիւն (Épilepsie)	2	11	13	3	6	2	0	2
Ժագսոնական լուսնոտումիւն (Épilepsie Jacksonien)	0	1	1	0	0	0	1	0
Հիստէրի (Hystérie)	0	10	10	3	5	1	0	1
Անկոււն աչաց կոփերու (հիստէրիի հետեւանօք) (Chute des paupières suite d'hystérie)	0	1	1	1	0	0	0	0
Հիստէրա-լուսնոտումիւն (Hystéro-épilepsie)	0	1	1	0	0	0	1	0
Ջղային դողոց (Tremblement nerveuse)	1	1	2	0	2	0	0	0
Ցնայական անդամալուծումիւն (Paralysie agitante)	0	1	1	0	0	0	1	0
Գարկամումիւն (Tétanos)	0	1	1	0	0	0	1	0
	3	41	44	16	17	3	4	4

ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆՔ ԵԱՐԺԻՉ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ								
	Պատկանում մաս 2	Ընդունում	Բազմադար- կու թիվ	Բժշկել	Բարւոքել	Արձակել	Մեռել	Պատկանում Ցուցում 1
Գերանակերպ ջլատում մկանանց (Paralysie musculaire pseudo-hypertrophique)	0	1	1	0	0	0	0	1
Ծիւրական յատաչխաղաց մկնախտ (Myopathie atrophique progressive)	1	0	1	0	1	0	0	0
Սուր յոդատայ (Rhumatisme art. aiguë)	0	43	43	43	0	0	0	0
Երկարատեւ յոդատայ (Rhumatisme chronique)	1	6	7	0	4	0	0	3
Չեւագեղձիչ բազմաոյոդատայ (Polyartrite déform)	0	1	1	1	0	0	0	0
Մկանայաւ (Rhumatisme musculaire)	0	1	1	1	0	0	0	0
Կոտրումը (Courbature)	0	39	39	38	0	0	0	1
Միջացաւ (Lumbago)	0	3	3	3	0	0	0	0
Ուռնական ազդրացաւ (Coxalgie bacillaire)	0	1	1	0	0	0	0	1
Ազդրաբարձային յոյազոս (Ankylose coxofémorale)	0	1	1	0	1	0	0	0
	2	96	98	86	6	0	0	6
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆՔ								
Ծաղիկ (Variole)	1	0	1	1	0	0	0	0
Ջրծաղիկ (Varicelles)	0	1	1	1	0	0	0	0
Տադաստ (Érizipèle)	1	0	1	1	0	0	0	0
Փանս առենդակերպ ջերմ (Fièvre typhoïde)	0	6	6	4	0	0	1	1
Ընդհատաջերմ (Fièvre intermittente)	0	11	11	9	1	0	0	1
Ճահճամետուժիւն (Impaludisme)	0	5	5	5	0	0	0	0
Համադում (Grippe)	0	2	2	1	0	0	0	1
Սակաւարիւնուժիւն (Anémie)	0	17	17	15	0	1	0	1
Ջրարիւնուժիւն (Chlorose)	0	1	1	1	0	0	0	0
Նաբարամիզուժիւն (Glycosurie)	1	1	2	0	1	0	1	0
Խոզախա (Scrofule)	0	5	5	0	2	0	2	1
	3	49	52	38	4	1	4	5
ՁԱՆԱԶԱՆ ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆՔ								
Ընդհանրացեալ էկզէմա (Exzéma généralisée)	1	0	1	1	0	0	0	0
Գոս (Gale)	1	1	1	1	0	0	0	0
Խաղտարտեայ քոս (Gale pustuleuse)	1	0	1	1	0	0	0	0
Տրանկախտ երրորդ աստիճանի (Syphilis tertiaire)	0	4	5	1	1	0	0	3
Տրանկախտային ախտածէտուժիւն (Cachexie syphil.)	0	2	2	0	0	0	2	0
Արեւահարուժիւն (Insolation)	0	2	2	0	0	0	2	0
Մորփիտամոլուժիւն (Morphinomanie)	0	1	1	1	0	0	0	0
Անդամայուճական խելայեղուժիւն (Démence paralyt.)	0	1	1	0	1	0	0	0
Մննդական թունաւորում (Intoxication alimentaire)	0	1	1	1	0	0	0	0
Ծերուժան տկարուժիւն (Faiblesse senile)	1	6	7	0	6	1	0	0
Ծերուժիւն (Senilité)	4	21	25	0	0	1	19	5
Ծերուժեան խելայեղուժիւն (Démence senile)	0	1	1	0	0	0	1	0
	8	40	48	6	8	2	24	8
Հոգեւարք	0	10	10	0	0	0	10	0
Ցուցակիս իւրաքանչիւր հիւանդուժեանց խումբի տուած գումարներն իրարու վրայ բարդելով կ'ունենանք	92	925	1017	496	185	28	205	103

Դիտողութիւն . — Այս ընդհանուր ցուցակէն կը տեսնանք թէ՛ անդ չկան Ափրոզիական հիւանդութիւններն որք Ներքին հիւանդութեանց բաժնոյն կը վերաբերին : Արդարեւ Հիւանդանոցիս կանոնադրութիւնը չթոյլաարեւ անոնց ընդունելութիւնն եւ միայն Յրդ աստիճանի Փրանկախաի ենթարկեալները կ'ընդունուին , զի այդ վիճակին մէջ աւելի Փրանկախաի հետեւանք տկարութիւններ կը համարուին քան թէ բուն հիւանդութիւնն եւ տարափոխիկ չէ :

Արտալ մ'է այս սակայն . եւ փափազելի է որ Պատուարժան Հոգարարձութիւնդ այս խնդիրն ի նկատի առնելով՝ Ափրոզիական ախտերօք վարակեալներն ալ ընդունելու թոյլտուութիւնն ընէ . եւ ինչո՞ւ Ազգին Տան դուռը փակել այդ խեղճերուն առջեւ : Անցած է այն ժամանակն յորում անքաւելի մեղք կը համարուէր Ափրոզիական հիւանդութիւններօք վարակիլը , զի դժբաղդարար այդ հիւանդութիւններն այնչափ տարածուած են , որ ասանցմէ վարակելոց հետ կը գտնուինք ամէն օր , եւ որ նոյն իսկ ամենէն լաւ բարոյական ունեցողները կրնան որ եւ է միջոցաւ առնել այդ հիւանդութիւնները : Նիւթական բարեկաւ վիճակ ունեցողները դադատապէս կը դարձանուին առանց ուրիշներու իրենց գաղանիքը յայտնելու . իսկ դրամական աննպատակ պարագայներու մէջ գտնուողք երբ կը ստիպուին Ազգին դուռը բաղխել , անդ խոտտովանելու իրենց ցաւը , եւ դարձան խնդրելու՝ ներելի չէ որ փակենք անոնց առջեւ Ազգային Հիւանդանոցն , եւ անդարման ճամբենք գալուս : Մեր այս ընթացքով ոչ միայն խղճի դէմ դործ մ'ըրած կ'ըլլանք , այլ եւ վնասած մերազնէից , զի կը պարտաւորենք այդ եղկելիներն անդարման մնալ եւ իրենց ընտանեաց ու պարագայից հազորդել իրենց անխոտտովանելի հիւանդութիւնն , որով եւ պատճառ եղած կ'ըլլանք վնասուցածման , աւելի մեծ թուով ազգայնոց վարակման , եւ վերջապէս թշնամութեան դործ մը ըրած կ'ըլլանք մարդկային ընկերութեան դէմ :

Ի դատաւ կան գիւղեր , քաղաքներ եւ նոյն իսկ գաւառակներ Փրանկախաի վարակեալ եւ փճացման վիճակին մէջ : Հաւանականաբար պանդուխտներ աստի տարած են այդ ախտն իրենց հետ եւ տուած են դայն իրենցիներուն եւ այլոց . . . : Ես համոզուած եմ թէ՛ եթէ տեղւոյս Հիւանդանոցները բաց ըլլային այս խեղճերուն առջեւ եւ ապահովութիւն տրուէր թէ՛ խնամուելով կրնան աւտոջանալ , անշուշտ դարձանուած ու աւտոջացած պիտի ըլլային իրենց ախտէն եւ դայն նուէր չպիտի տային իրենցիներուն :

Հիւանդանոցին մէջ չկան աչքի , ականջի եւ կոկորդի հիւանդութեանց յատուկ դարմանարածիւններ , որպէս ասիթ ունեցանք արդէն լսելու : Այդ ճիւղերն ունեցած են երբեմն ի Հիւանդանոցի իրենց մասնագէտ բժիշկներն , ու ասպա խնայողութեան համար այդ ծասայութեանց վերջ տրուած է : Այս կարգի հիւանդները չենք ընդունիր ընդհանրապէս եւ երբ ստիպուինք՝ պարբերաբար մասնագէտներու կը յղենք դարմանի համար . սակայն այս երթեւեկները դժուարին են , եւ կարելի չէ որ պէտք եղած կանոնաւորութեամբ տեղի ունենան :

Յանախորհիւնք հիւանդութեանց . — Վերոյրեալ ցանկն ըստ հիւանդութեանց դասակարգին համառօտելով՝ կ'ունենանք յետագայ ցուցակը .

Շնչառեւ տրական գործարանի հիւանդութիւնք	281
Արեան շրջանի գործարանի հիւանդութիւնք	61
Մարսողական գործարանի հիւանդութիւնք	245
Լեարդի , փայծաղի եւ որովայնային շճաթաղանթի հիւանդութիւնք	21
Միզային եւ ծննդական գործարանայ հիւանդութիւնք	38
Ջլային դրութեան հիւանդութիւնք	119
Ջղադրոգական հիւանդութիւնք	44
Շարժիչ գործարանայ հիւանդութիւնք	98
Ընդհանուր հիւանդութիւնք	52
Չանաղանք	48
Հոգեւարք	10
	1017

Այս ցուցակէն կը տեսնուի թէ Հիւանդանոցին մէջ դարմանեալ հիւանդութեանց աւագ մեծամասնութիւնը Շնչառեւտրական եւ Մարսողական գործարանայ կը վերաբերին , այս երկու դասակարգի գումարն ամբողջ հիւանդաց թուոյն կէսը կը ներկայացնէ . ասպա կուզանք Ջլային եւ Շարժիչ գործարանայ հիւանդութիւնք՝ որք ի միասին ամբողջ հիւանդութեանց $\frac{1}{4}$ էն աւելին կը ներկայացնեն . ուստի հիւանդութեանց 11 դասակարգի 4ը՝ կը ներկայացնեն հիւանդութեանց $\frac{3}{4}$ ն , իսկ միւս 7 դասակարգը միայն մնացեալ $\frac{1}{4}$ ը :

Հիւանդութիւնները մասնաւորապէս առնելով յաճախութեան կարգաւ ըստ յետագային կը դասակարգուին . Թոքային ուռակա-

նութիւն (115), Տնոցատապ (86), Սրտի հիւանդութիւնք (54), Սուր յօդացաւ (43), Կոտրտուք (39), Երկարատեւ աղետապ (35), Կրճիմն ստամոքսի (34), Սուր աղետապ (32), Կիսահարութիւն (28), Ծերութիւն (25) : Այս տասը հիւանդութիւնները դարմանեալ հիւանդաց (1017) գրեթէ կէսը (501) կը ներկայացնեն եւ ամենէ սովորական հիւանդութիւններն են :

Դասակարգութիւն հիւանդութեանց ըստ իրենց տեսականութեան . — Հիւանդութիւնները տեսականութեան տեսակէտով երեք դասերու կը բաժնուին, սուր (aiguë), երկարատեւ (chronique) եւ հոգեւարք : Այս նկատմամբ մեր դարմանած հիւանդներն ըստ յետագային կը բաժնուին :

Սուր հիւանդութիւնք	594
Երկարատեւ հիւանդութիւնք	413
Հոգեւարք	10
	<hr/>
	1017

Այլ Հիւանդանոցաց հետ բաղդատելով՝ Ազգային Հիւանդանոցի երկարատեւ հիւանդները շատ են : Հիւանդանոցս միանգամայն անկեալներու պատասպարան մ'ըլլալը կը բացատրէ ասոնց թւոյն ստուարութիւնը :

Տեսողութիւն հիւանդութեանց. — Այս տասնամսեայ շրջանին մէջ մեր դարմանած 1017 հիւանդաց 914ը բժշկեալ, բարւոքեալ, արձակեալ կամ մեռեալ են . արդ՝ ասոնց Հիւանդանոց անցուցած օրերը գումարելով կ'ունենանք 28,797, ըսել է իւրաքանչիւր հիւանդ միջին հաշուով 31 օրեր մնացած է Հիւանդանոցս :

Շերտպիտ Հիւանդանոցաց միջիններու հետ բաղդատելով՝ մերինն աւելի կը դանենք . արդարեւ Բարիզի Հիւանդանոցներու միջինը շուրջ 25 օր է . երբեմն Ազգային Հիւանդանոցն ալ մօտաւորապէս թիւեր սուած է, եւ նոյն իսկ Տօք. Օրմանեանի 1883-86ի քառամսեայ շրջանի տեղեկագրոյն մէջ՝ այդ ժամանակամիջոցի հիւանդութեանց տեսողութեան միջինն եղած է 24,40 օր : Միջիններու այս տարբերութիւնը մեծ է, եւ կը բացատրուի այն ժամանակի եւ այժմու անտեսական վիճակն ի նկատի առնելով : Արդարեւ այն ատեն պանդուխտ ազգայինք, ընդհանրապէս երիտասարդք՝ բազմաթիւ էին ի Մայրաքաղաքիս, որք ամէն կարգի հիւանդութեանց առթիւ կը դիմէին Ազգային Հիւանդանոցն, իսկ այժմ անոնց թիւն զգալապէս նուազած է, եւ հիւանդաց մի կարեւոր մասը Կ. Պոլսեցի ծե-

բունիներէ կազմուած է , որք իրենց երկարատեւ հիւանդութեանց համար կը դ, մեն այս Ազգային յարկը : Շատեր իրենց հիւանդութեանց անցնելէն վերջ երկար ատեն իբր Ապագինարան եւ ուրիշներ իբր Պատասխարան կը մնան Հիւանդանոցիս մէջ :

Գաղափար մը տալու համար թէ՛ ոմանք մինչեւ որչափ երկար ժամանակ կը մնան Ազգային Հիւանդանոցի մէջ , յետագայ ցուցակաւ կը պատկերացնենք 100 օրերէն աւելի Ազգային Հիւանդանոց մնացողաց մի ցանկը :

	Օր	Օրերու գումար	Մեն մի հիւանդի օրերու միջինը
24 հոգի	100—150	= 2920	= 121
13 »	150—200	= 2321	= 178
8 »	200—300	= 1846	= 230
3 »	300—400	= 1097	= 366
1 »	427	= 427	= 427
		<u>8611</u>	<u>175</u>

Արդ այս 49 անձեր առանձինն 8611 օր մնացած են եւ կամ իրարու վրայ իւրաքանչիւրը 175 օր , որ զգալապէս կը բարձրացնէ ընդհանուրին Հիւանդանոց մնացած օրերու միջինը : Արդ 914 անձերէն հանելով այս 49 հոգիներն (914 - 49 = 865) եւ ամէնուն Հիւանդանոց մնացած օրերու ընդհանուր գումարէն (28,797)՝ այդ 49 անձերու Հիւանդանոց մնացած օրերու գումարն (8611)՝ կ'ունենանք 865 անձերու համար (28797 - 8611) 20186 օր , որ մեզ կուտայ $23\frac{1}{2}$ աւուր միջին մը : Ուստի հարիւր օրէ աւելի Հիւանդանոց մնացողները նկատի չառնելով , հիւանդաց Հիւանդանոցս մնացած օրերու միջինն է $23\frac{1}{2}$ օր , որ գոհացուցիչ կրնայ համարուիլ :

Գ Լ Ո Ւ Խ Դ.

ԱՐԴԻԻՆԻՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Ընդհանուր ցուցակ . — Հիւանդանոցի ներքին հիւանդութեանց բաժնոյն մեր տաճարամտեայ շրջանի մէջ հիւանդաց ելեւմուտքն կը պատկերացնենք յետագայ ցուցակաւ .

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ք (Մ Ա Ր Տ 2)

Այր 67 — Կին 25 — Գումար 92

Մ Ո Ւ Տ Ք

Դրսեց	Այր 555	—	Կին 118	—	Գումար 673	
Որբանոցեց	» 38	—	» 42	—	» 80	
Պատժուեց	» 16	—	» 9	—	» 25	
Մեքանոցեց	» 50	—	» 22	—	» 72	
Յիմարանոցեց	» 51	—	» 24	—	» 75	925
						<u>1017</u>

Ե Լ Ք

Բժեկեալ	Այր 387	—	Կին 109	—	Գումար 496	
Բարւոքեալ	» 129	—	» 56	—	» 185	
Արձակեալ	» 23	—	» 5	—	» 28	
Մեռեալ	» 164	—	» 41	—	» 205	914
Պատժուեց					<u>103</u>
						<u>1017</u>

Այս ցուցակէն կը տեսնուի թէ խնամեալ 1017 հիւանդաց 496ը կատարելապէս աուղջացած են , 185ը բարւոքեալ են , 28ն առանց մեծ բարւոքում մ'ունենալու թողուցած են Հիւանդանոցն (երբեմն համոզուելով իրենց հիւանդութեան անբուժելիութեան , սակայն եւ շատ անգամ բուժուելու համար երկար ատեն Հիւանդանոց մնալու համբերութիւնը չունենալով) , 205ը մեռած են , իսկ մնացեալ 103ն ի դարմանի են դեռ Յունուար 1ին :

Ո՞ր ամսոց մեջ աւելի մահ կը պատահի . — Մեռեալներն ըստ ամսոց ներկայացնելով կ'ունենանք յետագայ ցուցակը .

Մարտ	18	Օգոստոս	25
Ապրիլ	22	Սեպտեմբեր	19
Մայիս	17	Հոկտեմբեր	27
Յունիս	14	Նոյեմբեր	22
Յուլիս	<u>22</u>	Դեկտեմբեր	<u>19</u>
	93		205

Ինչպէս կը տեսնուի թիւերու տարբերութիւնները բացարձակ չեն , ուստի եւ ներկայէս որ եւ է եզրակացութիւն հանել ներկի չէ , եւ առ այս դո՞նէ մի քանի տարուան միջինները կարեւոր են :

Մեռելոց սեռը . — Վերոգրեալ ընդհանուր ցուցակը կուտայ 205 մահերու 164ն այր եւ 41ը կին : Գիտենք արդէն թէ (էջ 20) 1010 հիւանդաց 770ն այր եւ 240ը կին են , ուստի

770 այր 164 մահ $\%_0$ 21,29
240 կին 41 » $\%_0$ 17,08

այրերն $\%_0$ 21 մահ տուած են , իսկ կիներն $\%_0$ 17 միայն :

Անցողարար դիտենք միայն թէ դրսէն եկող կիները շատ անգամ պառաւներ են , եւ անոնց մէջ կը պատահի մահերը :

Մեռելոց սարիքը . — Մեռելներն ըստ իրենց տարիքին դասակարգելով կ'ունենանք .

1—10	8		102
11—20	12	51—60	38
21—30	22	61—70	26
31—40	21	71—80	35
41—50	39	81—90	4
	<u>102</u>		<u>205</u>

Այս ցուցակն ինքնին որ եւ է որոյ եզրակացութիւն չկրնար առաւ , սուտնց բաղդատելու այդ տարիքով հիւանդներու թուոյն հետ ըստ յետագայ ցուցակին՝ յորում իւրաքանչիւր տարիքներու բաժանմանց դիմացը համեմատական մահը կը տեսնուի .

Տարիք	Թիւ հիւանդաց	Մահ	Մահերու համեմատութիւն
1—10	53	8	$\%_0$ 15,09
11—20	133	12	$\%_0$ 9,02
21—30	145	22	$\%_0$ 14,48
31—40	141	21	$\%_0$ 14,18
41—50	154	39	$\%_0$ 24,67
51—60	200	38	$\%_0$ 19,00
61—70	106	35	$\%_0$ 33,01
71—80	72	26	$\%_0$ 36,11
81—90	13	4	$\%_0$ 30,77
	<u>1010</u>	<u>205</u>	<u>20,28</u>

Արդ այս բաղդատական ցուցակէն կը տեսնուի թէ՛ ծերութեան մէջ եւ աւելի 60ն անցնողներու մէջ կը պատահի մահն , ապա կուգան 40—50 տարեկանները , յետոյ 51—60 տարեկաններն եւ ամէնէ քիչ զո՛ն գացողներն են 11—20 տարեկան պատանիները : Այս եզրակացութիւնը բնական կրնայ համարուիլ :

Մեռեալք ըստ հիւանդութեանց . — Հիւանդութեանց իւրաքանչիւր դասակարգին մասակարարած մեռեալները յետագայ յուշակաւ կը պատկերացնենք .

		Մահ
Շնչառեւարական գործարանի հիւանդութիւնք .	(281)	55
Արեան շրջանի գործարանի հիւանդութիւնք . .	(61)	11
Մարտոզական գործարանի հիւանդութիւնք . .	(245)	50
Հեարդի , Փայծաղի, Որովայնային շճաթաղանթի հիւանդութիւնք	(21)	9
Միզային եւ Ծննդ. գործարանաց հիւանդութիւնք .	(38)	6
Ջղային դրութեան հիւանդութիւնք	(119)	32
Ջղադրգոական հիւանդութիւնք	(44)	4
Շարժիչ գործարանաց հիւանդութիւնք	(98)	0
Ընդհանուր հիւանդութիւնք	(52)	4
Զանազան հիւանդութիւնք	(48)	24
Հոգեւարք	(10)	10
	<u>1017</u>	<u>205</u>

Այս յուշակէն գործնական եզրակացութիւն մը հանելը դժուարին լինելուն , նախապատիւ կը համարինք մասնապոյց ընել այն հիւանդութիւններն որք աւելի մահատիթ եղած են , զորս կը դասաւորենք ըստ իրենց վտանգաւորութեան :

	Հիւանդ	Մահ	Մահերու համեմատութիւն
Երկարատեւ եւ ուռական աղետալք	12	4	% 81,50
Ծերութիւն	25	19	% 76,00
Ուղեղային արիւնահոսութիւն	12	8	% 66,66
Ուղեղային արեւնակուտում	9	6	% 66,66
Ընդհանուր Անդամալուծութիւն	5	2	% 40,00
Թոքային Ուռականութիւն	115	42	% 36,50
Երկարատեւ Երիկամատալ	12	4	% 33,30
Կիսահարութիւն	28	6	% 21,42
Սրտի հիւանդութիւնք	44	9	% 20,45

Եթէ մեռեալները դասակարգենք ըստ իւրեանց հիւանդութեան տեւականութեան կ'ունենանք .

Սուր հիւանդութիւնք	594	23	մահ	% 3,87
Երկարատեւ հիւանդութիւնք	413	172	»	% 42,36
Հոգեւարք	10	10	»
	<u>1017</u>	<u>205</u>		<u>20,28</u>

Ուստի կը հետեւի թէ Սուր հիւանդութիւններէ շատ քիչեր (0/0 3,87) միայն կը մեռնին, եւ մահացելոց սառւար մեծամասնութիւնն Երկարատեւ հիւանդութեանց ենթարկեալներն են :

Ո՞ր հիւանդներն աւելի մահ կուտան . — Նախ անշուշտ հոգեւարքներն որք թաղուելու համար Հիւանդանոց կը բերուին , ապա կուգան Հաստատութեանս Ծերանոցի եւ Յիմարանոցի բնակչութիւնն՝ որք կարծես մեռնելու համար իրենց յատուկ յարկերէն Հիւանդանոց կը բերուին : Այդ երկու յարկերն առանց չափազանցութեան մեռնելու դատապարտելոց միջերանոցներ կրնան համարուիլ , որք Հիւանդանոցին վիճակադրութիւնը կը ծանրարեանեն :

Այս տասնամսեայ ժամանակամիջոցին ունեցանք .

Հոգեւարք	10	մեռեալ
Ծերանոցէն	24	»
Յիմարանոցէն	25	»
	<u>59</u>	»

Մեռեալներու համեմատութիւնը . — Մինչ ցարդ հրատարակեալ անդեկագրութեանց մէջ ընդհանուր հիւանդանոցի մահերն ի մի հաշուուած են, եւ ոչ թէ Ներսիս եւ Արտաքին հիւանդութեանց բաժիններն առանձինն . որդ՝ եթէ ըստ առաջնոյն հաշուենք , տարւոյս շրջանին մէջ ընդունուած 1638 հիւանդներու 285ը մեռած են, որով մահերու համեմատութիւնը կ'ըլլայ 0/0 17,4 . Իսկ եթէ միայն մեր պաշտօնաւարտութեան տասնամսեայ շրջանն առնենք՝ յորում ընդունած ենք 1348 հիւանդ եւ ունեցած ենք 235 մահ , մահերու համեմատութիւնը կ'ըլլայ 0/0 17,2 :

Եթէ Բժշկական եւ Վիրարութեական բաժինները միանդամայն դիմող 45 հիւանդները զատ զատ հաշուենք՝ կ'ուեննանք տարւոյն ընթացքին մէջ 1683 հիւանդ եւ 285 մահ , այսինքն 0/0 16,97 համեմատութեամբ :

Վերջին տարիներուն միջինն եղած է 1897ին 0/0 16,51

1898ին 0/0 19,37

Իսկ 1899ին 0/0 17,4 կամ 16,97

Տեղւոյս դրացի Յունաց Հիւանդանոցն որ մեր պայմանաց մէջ կը գտնուի , գրեթէ նմանօրինակ միջիններ կուտայ եւ կամ աւելի ճիշդ խօսելու համար համեմատական մահը մերինէն փոքր ինչ նուազ է : Սակայն պէտք է նկատի առնուլ թէ՛ անոնք աչքի , ախանջի եւ կոկորդի հիւանդութեանց ճիւղեր ունին , որք գրեթէ մահ չտալով՝ մահերու միջինը կը նուազեցնեն :

Տեղւոյս եւրոպական հիւանդանոցները շուրջ $\frac{0}{100}$ 8 մահ կուտան միայն, սակայն պէտք է նկատի առնել թէ՛ անոնք ընտրանօք կ'առնեն իրենց հիւանդներն, եւ ոչ թէ հոգեւարքներն՝ այլ եւ ծանր հիւանդները կը մերժեն, եւ երկարատեւ հիւանդութեանց ենթարկեալները կը ճամբեն. ուստի եւ անոնց տուած թուանշաններն անբաղդատելի են մեր միջիններուն հետ :

Բարիզի հիւանդանոցները $\frac{0}{100}$ 13—14 մահ կուտան, իսկ Վիէնայիները $\frac{0}{100}$ 14, որք արդարեւ զգալի առաւելութիւն մը կը ցուցնեն մեր տուած թիւերուն վրայ. սակայն պէտք է խոստովանիլ թէ անոնք աւելի առողջապահիկ պայմաններուն մէջ կը դաժու ին :

Ներքին հիւանդութեանց բաժինը զատելով՝ եթէ մեր տասնամսեայ շրջանին մէջ դարմանուած 1017 հիւանդներն 205 մեռեալներու հետ բաղդատենք՝ կ'ունենանք $\frac{0}{100}$ 20,15 : Այս թիւի բարձրութիւնն առ երեւոյթս է, զի աստ հաշուուած են ոչ միայն 10ի չափ հոգեւարքներն այլ եւ Մերանոցի 24 եւ Յիմարանոցի 25 մահերն (ընդ ամենը 59 մահեր) :

Ներքին բաժնոյն մէջ առած ենք եւ այնպիսի հիւանդներ որք թէպէտ Վիրաբուժական ճիւղին կը վերաբերին՝ սակայն գործողութեանց դիմադրելու անկարող լինելնուն՝ մեր բաժնոյն մէջ անցուցած են իրենց կենաց վերջին օրերն եւ անդ կնքած են իրենց մահն : Արդ՝ գոնէ վերոյիշեալ 59 անձերուն թիւը հանելով դարմանելոց (1017—59) եւ մեռելոց (205—59) դումարներէն կ'ունենանք՝ 958 դարմանեալի համար 136 մահ, այսինքն $\frac{0}{100}$ 14,19 որ գոհացուցիչ կրնայ համարուիլ : Եթէ Բժշկական եւ Վիրաբուժական ծառայութեանց մէջ միանգամայն դարմանեալ 45 հիւանդները յաւելունք դարմանեալներու թուոյն վրայ՝ միջինն աւելի կը նուազի ($\frac{0}{100}$ 13,65) :

Աստ կը կնքեմ պաշտօնավարութեան տասնամսեայ առաջին շրջանի տեղեկագիրն, որով ջանագիր եղած եմ ըստ կարելոյն Հիւանդանոցս եւ մասնաւորապէս Ներքին հիւանդութեանց բաժինն իրական գոյներով ներկայել ու պատկերացնել : Յուսամ թէ՛ շնորհիւ Ձեր Հաստատութեան բարելաւութեան մասին տածած ջանից, պիտի կրնամ յառաջիկայ տարւոյն աւելի լաւ վիճակաւ ներկայել Հիւանդանոցս :

Հաճեցէք ընդունիլ այս առթիւ, Ազնուաշուք Տեարք, իմ խորին յարգանացս հաւաստին :

Տեսուչ Հիւանդարանի

Եւ

Բժիշկ Ներքին հիւանդութեանց բաժնոյն

ՏՕԲ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ

10 Յունուար 1900

Ազգ. Հիւանդանոց Եէտի Գուլէի

2. ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ

1899 Յունուար 1 և մինչև 1900 Յունուար 1

Ազնուաշուք Ասենապետ ԷՔէնսի .

և

Պատուարժան Անդամ Հոգաբարձութեան

Եհի-Գուլի Ազգ. Հիւանդանոցին

Մեծ Նոր Խան

Ազնուաշուք Տեա'րք

Հիւանդանոցիս Վիրաբուժական բաժնոյն մէջ , 1899 Յունուար 1էն մինչև 1900 Յունուար 1 (562) հիւանդներ ընդունած ենք :

Եթէ այս թուոյն վրայ յաւելունք անցեալ տարու ընդ մնացած 68 հիւանդները , կ'ունենանք հիւանդաց 630 ամբողջական թիւը , որոց 64ը կը դարձանուն տակաւին եւ որք զալիք տարւոյ հաշւոյն պիտի անցնին : Արդ , այս վերջինները հանելով ամբողջական թիւէն , մեր տեղեկագրական ծանօթութիւնները 566 հիւանդաց վրայ պիտի ըլլան :

Ասոնց 356ը այր մարդ , 122ը կին , 74ը տղայ եւ 14ը աղջիկներ եղած են :

Այս տեղեկագրին մէջ աղջիկ ու մանչ կ'անուանենք անոնք՝ որոց տարիքը տասնեւհինգը անցած չէ :

Ընդհանրապէս , հիւանդաց տարիքը վիրաբուժական գործողութեանց եւ ընկերական տեսակէտով մեծ կարեւորութիւն ունենալուն , յետագայ ցուցակին մէջ նշանակած ենք անոնց տարիքները .

			258		511
1—10 տարեկան	46	30—40 տարեկան	93	60—70 տարեկան	38
10—20	» 106	40—50	» 84	70—80	» 13
20—30	» 106	50—60	» 76	80—90	» 4
	<u>258</u>		<u>511</u>		<u>566</u>

Տարիքներու այս ցանկին կցել կուզէի նաեւ դարմանելոց ծննդավայրի ցուցակը , որ գուցէ ձանձրացուցիչ ըլլար ձեզ համար , ուստի սլիտի գոհանամ գաղափար մը տալու համար ըսել թէ՛ Օսմանեան Կայսրութեան գրեթէ ամէն գաւառներէն հիւանդներ ընդունուած են Հաստատութեանս Վիրաբուժական բաժնոյն մէջ . եւ այս վերջին ժամանակներս մասնաւորաբար՝ մայրաքաղաքիս ամէն կողմերէն սկսած են Հիւանդանոցս դիմել : Գալով հիւանդաց ազգութեան , առիթ ունեցած ենք երբեմն երբեմն Հայ-Կաթողիկէներ , Հայ-Բողոքականներ , Թուրքեր , Յոյներ , Պաւլիարներ եւ Հրեայներ դարմանելու :

Այս վերջի եւ մէկ քանի նախընթաց տողերը կը թոյլատրեն մեզ յետագայ խորհրդածութիւնը ընելու :

Խնամուած 566 հիւանդներուն վրայ ալ գործողութիւնն չէ կատարուած . անոնց մէջ եղած են այնպիսիներ՝ որք երկիւղիւ մերժած են գործողութիւնը . գտնուած են ուրիշներ ալ՝ որոց վրայ անգործադրելի եղած է գործողութիւնը , եւ վերջապէս ուրիշ խումբ մը հիւանդներ որոնք մտրիժային կամ այլ ախտեր ունենալով՝ առանց իրենց վրայ գործողութիւնն կատարուելու խնամուած են : Արդ՝ առանց թիւը հանելով 566էն մեզ կը մնայ 261 հիւանդներ որոց վրայ աւելի կամ նուազ գործողութիւններ կատարուած են :

	Այր	Կին	Տղայ	Աղջիկ
Գործողութեամբ բժշկեալ	139	61	25	4
Առանց գործողութեան բժշկեալք	93	14	26	5
Գործողութեամբ բարւոքեալք	18	5	—	1
Առանց գործողութեան բարւոքեալք	35	9	10	1
Արձակեալք	52	24	10	3
Գործողութեան ենթարկմամբ մեռեալք	6	2	—	—
Առանց գործողութեան մեռեալք	13	7	3	—
	356	122	74	14

Այս թուանշաններէն կը տեսնուի թէ՛ ընդհանուր մահը շուրջ 5,47 առ 0/0 է . գալով գործողութեան ենթարկմամբ մեռածներու , անոնց մահուան թիւը շուրջ 3 առ 0/0 է : Կարճ խօսելով 566 հիւանդներէն Յը միայն մեռած են :

Երբ ծանր վիրաբուժական գործողութեան մը դիմենք , սովորութիւնն ունինք Պատ. Հոգաբարձութեան կամ հիւանդին ծնողաց ու բարեկամաց առաջուց իմացնել :

Երբէք հիւանդները ուրիշ հիւանդաց քով չեն մեռնիր, հազիւ հոգեւարք՝ կը գրուին մասնաւոր սենեկի մը մէջ, հետի այլոց նայուածքներէ եւ ուրիշներէ առթուած անհանգստութիւններէ :

Կանխապէս ըսինք թէ՛ 261 գործողութիւններ կատարած ենք տամերկու ամսուան միջոցին, որոց կարեւորները կը յիշատակենք աստ :

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ. — **Չորս փամփշտային Միզային քարեր** (Calculs de la vessie). — Շատ սարկներէ ի վեր միջնայքի հատումը (taille périnéale) ի կիր կ'արկանէինք փամփուշտի միզային քարերը հանելու համար: Այս տարի միայն ենթաորովայնային հատման (taille hypogastrique) նախապատուութիւն սուրինք. վստահօրէն այս վերջին կերպը առաւելութիւններ կ'ընծայէ, առաջնոյն նման միջնայքի կեղանք (fistule périnéale) չի մնար հիւանդին վրայ :

Ապաքինման տեւողութեան պաշտով, կրնայ ըսուիլ որ գործողութենէն առթուած վէրքին բուժման տեւողութիւնը երկու պարագայից մէջ ալ նոյնն է :

Երբ քարերը մեծ են եւ կամ փամփուշտի մէջ ընդգրկեալ՝ ենթաորովայնային հատումը առաւելութիւններ կ'ընծայէ : Մինչեւ հիմա, մեր այս կամ այն կերպով հանած քարերուն մէջ ամենէն մեծը 4 հարիւրորդամէթր արամագիծը անցած չէ : Ասկից վերջ ենթաորովայնային հատման եղանակին նախապատուութիւն պիտի տանք :

1 **Ուռական փամփշտատապ** (Cystite tuberculeuse). — **Վերնայայի հատում** (taille suspubienne), քերում, կատարեալ բուժում, արդիւնք յոյժ միջակ :

3 **Մզկային անձկութիւն.** — Երկուքը հին ջերմամիզութենէ առթեալ էին. իսկ երրորդին հիւանդութիւնը առթուած էր Ֆրանկախտային վաղեմի սպիէ մը : Այս երեք պարագայից մէջ ալ առանց հիւանդը մարեցնելու ներքնարար մզկահատում (l'utrétrotomie interne) ի գործ դրինք : Երեք օրեր մնայուն միզահան (sonde) դրինք — բժշկութիւն :

1 **Մզկային կեղանք** (Fistule uréthrale). — Գիտենք որ այս կեղանքներուն բուժումը խիստ դժուար է, զի յաճախ մզկային անցից աստիճանաբար ընդլայնմամբ հնար չրլլար բուժել զայնս : Ամերիկեան անուանեալ միջոցաւ կը յաջողի ամենէն աւելի, նա մաշաւանդ եթէ կեղանքը միզային փամփուշտին քով չի գտնուի : Այս միջոցն ի գործ դրինք երկասարկի մը վրայ որ կատարելապէս

բժշկուեցաւ : Այս կերպը կեղանքը լայնօրէն բանալու , իր ծագած տեղը երթալու , սպիւները հանելու , եւ առանց մզկային հուղաթաղանթին գոչելու վէրքը կարելուն մէջ կը կայանայ :

2 Անձկութիւն թլիլի (Phimosi). — Այս երկու պարագաներուն մէջ թլիլաւում կատարած ենք պարզ մկրտաներով , այս գործողութեան համար հնարուած մանաւոր գործիներու գործածութիւն չեմ ընէր : Առանց մարեցնելու վիրաց շրթունքները մետաքսով կը կարեմ եւ 4 օրէն կը հանեմ կարերը :

5 Զրդողութիւն ամորձեաց (Hydrocèle). — Առնցմէ մէկ քանին մանիշի երփնաջրով (teinture d'iode) դարմանուած են , եւ ուրիշներ ամորձեաց շճաթաղանթի (tunique vaginale) հատմամբ :

Մանիշային երփնաջրով դարմանումն յաճախ ախտակրկնութիւններ յառաջ կը բերէ . ասոր համար հատման միջոցը նախապատուելի կը թուի մեզ : Մեր գործածած մանիշախառն լուծոյթը կը բաղկանայ 20 կրամ թորեալ ջուրէ եւ 80 կրամ մանիշի երփնաջուրէ : Երբ ամորձեաց ջրդողութեան մէջ սրագործութիւն (opération) կատարենք՝ ամորձեաց շճաթաղանթը չենք կարեր , այլ կը շփենք՝ զայն եւ ամորձիքները՝ մանիշակերտ փոշի կրող լաթով մը (compresse iodoformée) :

1 Ուռական ամորձատապ . — Որձատութիւն :

1 Աջ ամորձեաց ելունդ . — Որձատութիւն :

1 Պորտաղբային կեղանք (Fistule stercorale ombilical). — Աղեաց հատում :

12 Սրբանի կեղանք (Fistule anale). — Երբեմն պարզ , երբեմն բաղադրեալ հատում :

2 Տեռատեսութիւն . — Այս երկու հիւանդներուն վրայ գործողութիւնը կատարուած է քլորօֆորմի ազդեցութեան տակ եւ Բապրլէնի ջերմատաղով (thermo-cautère de Paquelin) : Բուժումը երկար չտեւեց : Ռէկլիւի միջոցը՝ հուղաթաղանթին նշորակով խլումը՝ ի գործ դրած չենք :

1 Սրբանի մասսրոյս (Végétation anale). — Մարեցնել եւ խլում Բապրլէնի ջերմատաղով :

1 Ուղղաղեաց վերնամաշկային խլիրդ (Epithélioma du rectum). — Մարեցնելով Բապրլէնի ջերմատաղով հատում եւ ուղղաղեաց հուղաթաղանդի (muqueuse rectale) մորթին հետ կարում :

3 Ուղղաղեաց անկում (Prolapsus rectale). — Հուղաթաղանթի հատում Բապրլէնի ջերմատաղով :

3 Յաւելադետապ (Appendicite). — Ժամանակէ մը ի վեր այս ախտին համար ի գործ կը դնենք որովայնահատում, եւ կանխաւ յաւելադին կապելէ վերջ կը հանունք զայն . հատման կէտը նրբօրէն կը կարենք որպէս զի ներփակ ազանդութիւնք որովայնային շճաթաղանթը չվարակեն : Կպումներու (adhérences) անջատումն յոյժ դժուար է ընդհանրապէս : Նմանօրինակ պարագայի մը հնար չեղաւ յաւելադին կարել : Գործողութիւնն առանց տաղման եւ առանց պատահարի :

1 Խցումն աղեաց . — Որովայնահատում (laparotomie) — հին որովայնային շճաթաղանթատապի հետեւանօք որովայնային շճաթաղանթը բաղմաթիւ կապերով կցուած էր :

32 Յայլական աղեթափութիւն . — Սա մեր բաժնոյն մէջ ամէնէն շատ կատարուած գործողութիւնն է , ասոր յաճախադէպութիւնը կը բացատրուի երբ նկատի առնենք մեր Հիւանդանոցը յաճախող մարդոց վիճակը , որոնք ընդհանրապէս դժուար աշխատութեանց ենթարկեալներ են : Ընդհանրապէս այս գործողութեան ենթարկեալք 15 օրէն կը բժշկուին , իրր պատահար կը նկատենք մէկ քանի թարախացման (suppuration) եւ մէկ կամ երկու անգամ վիրական ամորձատապի (orchite) դէպքեր : Աղեթափութեան մէջ բժշկական դարման ընդունող անձանց տարիքը եղած է 8էն մինչեւ 68 : Ստոյգ է որ շատ մը վիրահասաներ չեն հաւանիր 40 տարեկանէն վեր մարդոց վրայ գործողութիւն կատարել , բայց այս սահմանը մեզ համար ճիշդ չի թուիր : Մեր գործողութիւններէն ետք ո՛չ տենդ կայ եւ ո՛չ ալ որովայնային շճաթաղանթատապ : Իրր բժշկական հետաքրքրութիւնն աստած ենք աղեթափութեան պարկին մէջ մերթ կուրադին , մերթ յաւելադին , եւ անգամ մ'ալ պարկը կցուած էր փամփուշտին : Մեր հետեւած միջոցը Լիւքաս Շամբիօնէրինն է : Հեղինակ՝ որ առաջինն եղած է հականեխական միջոցներով աղեթափութեան արմատական բուժումն կատարող՝ ի Ֆրանսա : Արծաթեայ թել եւ լար (catgut) չենք գործածեր , հիւսուած մետաքսին է որ նախապատուութիւն կը տրուի :

1 Բարցից աղեթափութիւն (Hernie crurale). — Այս գործողութիւնը կատարուեցաւ 28 ամեայ օրիորդի մը վրայ , որ 16 օրէն մեկնեցաւ Հաստատութենէս կատարելապէս բժշկուած :

27 Հնաւուրց արդանդատապ . — Այս հիւանդութիւնը՝ ըլլայ արիւնահոտական , ծննդարեւական կամ ջերմամիզական՝ քերամմը (curettage) կը դարմանենք : Սովորութիւնն ունինք ներքնարգան-

դային (intra-utérin) լուացքէ վերջ արգանդի խոռոչը խարել մանիշի երկնաջուրով՝ Պրօնի գրեխի միջոցաւ : Արգանդի բերնին ընդլայնու մը կը կատարուի հէկարի մամերով (bougie de Hegar) :

2 Արգանդի անկում . — Պարագայի մը մէջ ի գործ գրինք colpopérineoraphie՝ առանց մեծ արդիւնքի : Միւս պարագային մէջ hystéropexie՝ ի գործ գրինք . որովայնը բացինք , արգանդը դէպ ի դուրս քաշելով զայն սրովայնային ուղիղ մկանանց կարեցինք երեք տեղէն : Թեկերը սրովայնին շճաթաղանթի եւ արգանդի մկանանց մեջէն կ'անցնէին , մտրթը այլ սրովայնահատութեանց նման՝ փակեցինք : Արդիւնքը ուշ , սակայն լաւ եղաւ :

2 Արգանդափողի պատառուածք . — Աքցանի գործածութենէ յառաջ եկած այս երկու պատառուածքները հիւանդաց կը պատճառէին տեւական արգանդատապ : Նախ արգանդի քերումներ ի գործ գրինք եւ անմիջապէս յետոյ էմմէի գործողութիւնը կատարեցինք , այսինքն մկրասի երկու հարուածով արգանդի փողի երկու շրթանց պատառուածոց վէրքերը հանեցինք եւ յետոյ կարաններ գրինք , առանց արգանդի հուղաթաղանթէն անձնելու : Տասնեւերկու երրորդ օրը թեկերն հանուելով արգանդը իր բնական վիճակը վերստացաւ :

1 Լայն կապի պալար (Phlegmon du ligament large). — Կուշտէն լայն բացուածք մը , ամիս մը ամբողջ ամենօրեայ լուացք , ուրդումն (drainage) եւ բժշկութիւն :

1 Արիւնահոսական նեարդուռ արգանդի (Fibrome de l'utérus hémorrhagique). — Հակառակ նեարդուռի փոքր ծաւալին շարունակական եւ առատ արիւնահոսում կար : Հիւանդին վրայ սրովայնային արգանդահատում ի գործ գրինք : Ստոյգ է որ այս միջոցը լքուած է շատ մը վիրաբոյժներէ բայց մեզ միշտ լաւ արդիւնք մը տուաւ : Որովայնային ամբողջական արգանդահատումը (hystérectomie) հակառակ իւր ծանր հանգամանաց՝ միւս միջոցէն նախապատիւ համարուած ըլլալով վիրաբոյժներէն՝ կը խոստանանք ասկէ ետք զայն ի գործ գնել :

1 Արգանդի նեարդային Պօղիպատ . — Պօղիպատը կոթունաւոր էր . արգանդը ընդլայնելէ վերջ՝ մկրասներով խլեցինք զայն : Արիւնահոսումը դադրեցաւ եւ հիւանդը բժշկուեցաւ , ուսեցրին մեծութիւնը պղտիկ նայնջի մը չափ էր :

1 Գերաճումն արգանդափողի . — Փողի կարում , բոլորչի հատում . կարուածք . բժշկութիւն :

3 Ստինքի խլիրդ . — Խլիրդի հատման ամէն պարագայի մէջ միշտ ջանադիր եղած ենք անոթային շրջանակի պարպումը կատարելու , թէ՛ արեան մեծ խողովակաց մօտ եւ թէ՛ կրծային մկանանց տակը դանուած խոյլերու (ganglion) ներկայութեան պատճառաւ : Այս հիւանդներէ մէկուն հիւանդութիւնը տարիէ մը ետք կրկնուած է :

5 Ծծի խղխայթ . — Բաղմաթիւ հերձու մներ . բժշկութիւն :

8 Պարանոցային թարախուա խուլատապ . — Հատում եւ քերում (grattage) :

3 Կայծակն . — Խաչաձեւ հատում . — Մէղին մէջ շաքար չկար :

2 Գերաճումն նշկաց . — Խլում Մէղօննէվի գործիքով :

1 Խոյլանեարդուռ ցալից (adéno-fibrome de la région inguinale) . — Խլումն :

1 Որովայնի արտաքին մասի հրազնի վէրք . — Գնդակը հանեցինք . բժշկութիւն :

1 Ճուլամասի վրայ հրազնէ առթուած վէրք . — Յօդահատութիւն կոճա — ենթադաստակի (phalango-métacarpienne) :

1 Մասնեմասի վրայ կարուածի վէրք . — Կոճի (phalange) յօդահատութիւն :

1 Սրնքոսկրի եւ ոտից ոսկրափառութիւն . — Սրունքի ստորին երրորդ մասի հատում , բոլորչի մէթօա (méthode circulaire) :

3 Կարթի (métatars) ոսկրափառութիւն . — Հիւանդներէն մէկուն հինգերորդը եւ միւսին երկու ծայրի ոսկորները հանեցինք :

3 Ջանաղան մատից կոճերու ոսկրափառութիւն . — Կոճակոճակային (Phalango-phalangienn) յօդահատութիւն :

1 Չախ ոտից ուրնի (tarse) սեպաձեւ (cunéiforme) եւ նաւակաձեւ (scaphoïde) ոսկերց ոսկրափառութիւն . — Բիրօօֆեան հատում :

1 Կրնկոսկրի եւ վէգի ոսկրափառութիւն . — Սրունգի ստորին երրորդ մասին հատումն :

1 Աջ ուղքի (tibia) փառութիւն . — Ուղքի յօդահատում :

1 Աջ ոտից բթամասի ոսկրափառութիւն . — Կարթակոճային (métatarso-phalangienn) յօդահատութիւն :

1 Բարձոսկրի (fémur) փառութիւն . — Հատում :

2 Սրնքոսկրի (péroné) ոսկրատապ . — Հատում :

1 Բազկի ոսկրածձատապ — Բազկոսկեր վերի երրորդ մասն հատումն , բոլորչի մէթօա :

1 Մնկային յօդատապ . — Հատում սրունքի ստորին երրորդ մասին :

1 Չախ արմուկի սնկային յօդատապ . — Յօդական հատում :

1 Թարախացեալ ազգրացաւ . — Քերում :

2 Կեղանկոտ սպիտակ ուռեցք ծնկի . — Մէկ պարապային մէջ բարձից սատրին երբորդ մասին հատումը . միւսին քերում սնկամայ (fongosité) :

2 Թիկանց Պոտի ցաւ (Mal de Pott). — Sayrosի սեղմիրան :

1 Չոր քաղցկեղ ձախ սախ . — Սրունքի սատրին երբորդ մասի հատումն :

1 Բիթամասի խոնաւ քաղցկեղ . — Լիւֆրանի յօդահատութիւն :

1 Չախ ծղիկի սատրին ծայրի բազադրեալ բեկումն . — Ծղիկի երկու սակերաց սատրին ծայրերու հատում . — Սախուռեցանք այս ծայրահատութիւնը ընելու սրովհետեւ երկու ծայրերը փտած եւ վէրքէն դուրս ցցուած էին . Անեղծ պահուած է ձեռքը :

3 Բեկում գանկի ձախակողմի եւ ճակատոսկեր աջակողմեան մասին . — Ոսկորները միտուած էին ու հիւանդները ժաքսօնեան լուսնոտութիւն ունէին : Փարապէօֆի շաղափով շաղափեցինք :

1 Տորմումն փոշտերակաց . — Այս պարապային մէջ միշտ սերմնային լարի յեանակողմեան եւ յատաջակողմեան երակաց եւ սերմնային շնչերակի հատումը կը կատարենք : Սամրձեաց ծիւրում անզի ունեցած չէ . գործողութեան վէրքը բժշկուած է միշտ առաջին անգամէն :

2 Աղեաց եւ որովայնային շճաթաղանթի ուռականութիւն (Entéro péritonite-tuberculeuse) . — Որովայնահատութիւնն այս պարապային մէջ ալ գործածուեցաւ երիտասարդներու վրայ . երկուքն ալ բժշկուեցան : Այս յաջողութիւնները եւ առջի սատրիներուն այս գործողութեամբ բժշկուածները նկատի առնելով , բոլոր աղեաց եւ որովայնային շճաթաղանթի ուռականութիւն ունեցողներուն համար խորհուրդ կուտամ որովայնահատութիւնը ի գործ դնել : Այս մասին կը նշանակեմ հոս 17 տարեկան ազջիկ մը , որուն վրայ ի գործ դրած եմ որովայնահատութիւնն իր ունեցած աղեաց եւ որովայնային շճաթաղանթի ուռականութեան դարման մը ընելու համար , եւ որ երեք տարի ետք ամուսնացաւ : Այս օրինակը կը ցուցնէ թէ որքան բուժումը արմատական է երբեմն :

1 Որովայնային փքացումն . — Այս պարապային շահագրգիռ է . հիւանդը Հիւանդանոց գրկուած էր որովայնահատման ենթարկուելու համար . արդ , Փօշէրի խողովակը ուղղադիէն ներս մղելով (sondage)՝ կապերը հանուեցան , եւ հիւանդը բժշկուեցաւ առանց մեր սրագործական միջամտութեան : Ամէն անգամ որ փքունք կը վե-

բարտադրուէին միեւնոյն միջոցը (sondage) ի գործ կը դնէինք : Այս փքացման պատճառը ազեաց ծուլութիւնն (parésie) էր :

1 Չախ ձուարանի բշտա-մսուռ. — Որովայնահաստութիւն . բազմաթիւ կպտմներ գանուեցան , ուռեցքր անդը թողուեցաւ :

1 Սոչակի խլիրդային ուռեցք . — Սոչակահաստութիւն :

1 Վերին ծնօտի ընդայտոյց (Épulis). — Ուռեցքը հանուեցաւ համապատասխան ոսկրային մասին հետ . ասի միակ արմատական դարմանն է , որովհետեւ ընդայտոյցի պարզ խլումը աւելի կամ նուազ արագ կրկնու մներու անդի կուտայ :

1 Մեծափայծաղութիւն (Splénomégale). — Սոաջին անդամը եղաւ որ Հիւանդանոցիս մէջ փայծաղի հատումը կատարուեցաւ : Այս համարձակութիւնը եկաւ մեր վրայ , վերջին ատեններս Ճանձային ախտի (Infection paludique) պարագայի մ'առթիւ կատարուած գործողութեան մը յաջող ելքէն :

ՄԱՀՆԵՐ . — Ըսինք որ ընդունուած 566 հիւանդներուն 31ը մեռած են . արդ այս 31 մահականութեան մէջ 20ը մեռած են առանց մեր միջամտութեան , եւ միս 8ը յետ գործողութեան : Ընդհանրապէս մահականութիւնը խիտ կարեւորութիւն ունենալով տեղեկագրերուն մէջ՝ կ'ուզենք ծանրանալ հոս փոքր ինչ ճշդելու համար մահերու այս թիւը :

Տեւական փամփշտասաղ ունեցող երկու հիւանդներ միզային թունաւորումէ (urémie) մեռած են , եւ որոնք արդէն տարիքին առած ըլլալով կարելի չէր վրանին գործողութիւն կատարել :

Հիւանդ մը մեռաւ ձախ ամորձիքին վրայ գործողութեամբ չելլուելիք խլիրդ ունենալուն հետեւանօք , մահ ախտաժէտութեամբ (cachexie) :

Շագանակագեղձի գերաճում ունեցող եօթանասուն տարեկան հիւանդ մը , հակառակ ազդու դարմաններու , մեռաւ վարակման տենդէ : Շագանակագեղձի բլթակաց հատումը մեղմէ չէ փորձուած տակաւին :

Սոչակի խլիրդ ունեցող անձի մը խոչահաստութիւն տեղի չունեցաւ՝ իւր վիճակի տկարութիւնն ինկատի առնելով :

Քմաց կամարի եւ շրթանց վերնաշմակի խլիրդ ունեցող մը մեռած է ախտաժէտութեամբ :

Վերին ծամուկեաց մսուռ (sarcum) ունեցող եւ ստորին ծամուկեաց մսուռ ունեցող երկու հիւանդներ մեռած են ախտաժէտութեամբ :

Ծծի խլիրդ ունեցող երկու կիներ մեռած են ախտաժէտութեամբ :

Ստոյգ է որ այս ախտին մէջ յաճախ խոյլերը կը փնտտեմ . բայց երբ ասոնք անրակէն անդին կ'անցնին եւ կամ կուրծքի խորերը մխուած են՝ զանոնք կը թողուամ :

Պարտ կը համարիմ աւելցնել հոս նաեւ թէ՛ զժուարին պարագայից մէջ կը վերցնեմ երկու լանջային մկանուներն եւ անթանջին երակը կը կապեմ :

Վզին վրայ աւշամառու ունեցող տարիքոտ մարդու մը ունեցած ունեցքին վրայ գործողութիւնն անկարելի ըլլալով, մեռաւ :

Փողային թարախացեալ խոյլատապ եւ թոքային ուսականութիւն ունեցող աղայ մը, մեռաւ իր հիւանդութեանց հետեւանօք :

Ազգրայաւ ունեցող երեք հիւանդներ մեռան ընդհանրացեալ ուսականութենէ . մեր կողմէ իրենց ախտին միջամտելը եւ բուժելու ջանալը անօգուտ եղաւ :

Պոսի ցաւ ունեցող 2 աղայք, ասանց գործողութեանը ենթարկուելու մեռան :

Բթամատի արագրնթաց քաղցիկով ենթարկեալ 4 ծերեր, մեռան իրենց հիւանդութեան հետեւանօք :

Հարուածական թանձրախելապատակ (pachymeningite) ունեցող աղայ մը իր վրայ գործողութիւնը կատարուելը ծնողքին կողմէ չուզուելով, մեռած է :

Կէտիկ Բաշայէն Հիւանդանոցս եկած մարմնոյ այրում ունեցող ծեր կին մը մեռաւ . ինչպէս գիտենք այս պարագայներուն մէջ հիւանդին վիճակին ծանրութիւնը ո՛չ թէ այրուածքին խորունութենէն՝ այլ տարածութենէն կախեալ է : Այս մեռնողին աղջիկն որ իր հետ միևնոյն ժամանակ այրած էր, բժշկուեցաւ մեր կողմէն . որովհետեւ իր վնասուած անոգամները թէեւ մեռնողին աստիճանն ունէին, բայց միայն երկու ձեռքերուն վրայ սահմանափակուած էին իւր վէրքերը : Թո՛ղ այրուածքը թեթեւ կամ խոր՝ կամ այս երկու հիւանդաց պէս երրորդ աստիճանին մէջ ըլլայ, acide picriqueի լուծոյթը կը գործածենք մենք՝ ի բժշկութիւն : Այսպէղը կը նշանակեմ, որովհետեւ այսպիսի պարագաներու մէջ գործածուած դարմաններէն լաւագոյնն է :

Չախ դատտակային բազադրեալ բեկման մը հետեւանօք յառաջ եկած վարակիչ տենդէ մեռած է մարդ մը, որուն վրայ գործողութիւն կատարել անկարելի եղած է, որովհետեւ հոյեւարք վիճակի մէջ հասաւ Հիւանդանոցս :

Երկու հիւանդներ ցայլից խեղդող աղեթափութիւն ունենալով,

գործողութենէն ետք մեռած են . որովհետեւ ամորձեաց պարկին մէջ ալեաց մի մասի քաղցկեղ ունեցած էին : Ապահովարար եթէ այս հիւանդները ժամանակին Հիւանդանոցս գային , քաղցկեղային մնասուած մասերու չպիտի հանդիպէինք եւ հիւանդները բժշկուած պիտի ըլլային — հակառակ աղեհատութեան , դժբաղդարար շիյաջողեցանք փրկել զանոնք :

Կին մը պորտային խեղդող աղեթափութենէ մեռած է գործողութենէն ետքը , որովհետեւ աղիքը գօսացեալ էր :

Երկու մարդիկ՝ որոց վրայ ցաղական աղեթափութեան համար արմատական դարմանը ի գործ դրած ենք՝ մեռած են թոքային ուռականութեան հետեւանօք , որ գործողութենէն ետք երեւան ելաւ : Այս երկու պարագայներուն ինչպէս նաեւ բոլոր միւսներուն , հիւանդները գործողութեան ենթարկուելէ առաջ քննութենէ մը կ'անցնենք . արդ՝ եթէ ասոնք ուռականութեան փոքր նշան մը ցոյց տային , գործողութեան չպիտի ենթարկուէին . գործողութենէ վերջ էր սուրեմն որ թոքային ուռականութիւնը մէջտեղ ելաւ :

Ծղկի պաշար ունեցող 70 ամեայ ծերունի մը սուր աղէտապէ մեռաւ :

Վերջապէս ճահճային ախտածէտութենէ մեռած է մարդ մը , որ չորս ամիս առաջ ենթարկուած է փայծաղահատութեան գործողութեան մը՝ որ շատ լաւ յաջողած է :

Վերջին բառ մը մահականութեանց մասին . Մահականութիւնը աւելի քիչ պիտի ըլլար եթէ հիւանդները չուշանային Հիւանդանոցս գալ , կամ զանազան մարդասիրական ընկերութեանց կողմէ հոգեւարք կամ գրեթէ մեռած մեղ շի դրկուէին : Այս իրաւացի կէտերէն զատ ուրիշներ ալ կան որք ու զղապէս մեր Հաստատութեան յարակից են : Մեր Հիւանդանոցը մայրաքաղաքիս միւս հիւանդանոցներուն չի նմանիր . պէտք է պիտուալ թէ՛ ծերունեաց եւ յիմարներու պատասպարան մ'է միանգամայն , ասոնց հանապազօրեայ մահերը մեր տեղեկագրերը կը ծանրաբեռնեն :

Ը Ն Դ Շ Ա Ն Ո Ւ Ր Յ Ո Ւ Յ Ա Կ

Յունուար 1ին 1899 ներկայ		Բժշկեալք	367
հիւանդներ	68	Բարւոքեալք	79
Ընդունուած հիւանդք 1899		Արձակեալք	89
Յունվ. 1էն մինչեւ 1900		Մեռեալք	31
Յունուար 1	562	Դեկտ. 31ին պատրաստք .	64
	<u>630</u>		<u>630</u>

ՎԵՐՋԱԲԱՆ . — Ահաւասիկ ի՛նչ որ կրցայ հայթայթել տարւոյս տեղեկագրական ուսումնասիրութեան համար , կը խոստանամ յառաջիկայ տարի աւելի կատարեալն ընել :

Վեց տարի է որ կը վարեմ վիրաբուժապետի պաշտօնը , որոյ միջոցին միշտ ջանացած եմ Պատուարժան Հոգաբարձութեան յարգանացը մէջ ապրելու : Կը յուսամ ինձ հանդէպ տածուած այս յարգանքը պահել յարատեւութեամբս եւ աշխատութեամբս : Կը խոստովանիմ որ դժուար եւ տաժանելի է միանգամ վիրաբուժապետի պաշտօնը եւ ստուգիւ եթէ ինձի շօքնէին իրենց գործունէութեամբ ներքին բժիշկները , Բարադամեան , Իփլիքճեան եւ Գաղազեան էֆէնտինները , ժամանակը դժուարաւ աշխատութեանս կատարման պիտի բաւէր . ուստի կը խնդրեմ Պատ. Հոգաբարձութենէն որ հա՛ի նկատողութեան անուշ անոնց եռանդը եւ բարեացակամութիւնը :

Գալով պաշտօնակցիս , Տօք. Տաղաւարեանի , անկեղծ շնորհակալութիւններս կ'ուզեմ իրեն՝ իր անձնուէր եղբայրակցութեան համար :

Մեր այս ըսածներէն կը հետեւցնունք թէ շնորհիւ Պատ. Հոգաբարձութեան ժրաջան գործունէութեան , մեր Հիւանդանոցը մայրաքաղաքիս միւս հիւանդանոցներուն դիրքը կրցած է ստանալ , որոնց պիւճճէն մերինէն շատ աւելի բարձր է :

Արդի յառաջադիմութեան համեմատ վիրաբուժական բաժինը հարստացնելու համար ո՛ր եւ է զոհողութիւն չէ խնայուած : Մեր գործողութեան սրահը գերընտիր , մաքուր եւ մարմարով պատած է . սաք եւ պաղ ջուրի ծորակներ մեր գործը կը դիւրացնեն : Մեր գործնաց հաւաքածոյն (arsenal) կը կատարելագործուի օր քան զօր նոր գնումներով եւ վերջապէս մեր դարմանասրահները առաջին կարգի եղած են : Մեր հականեխական լուծոյթները խնամօք կը պատրաստուին մեր յարգելի գեղադորձապետ Ֆէրհասեան էֆ.ի կողմանէ որու գովեստներ միայն ունինք ընելու :

5/18 Մայիս 1900

Բժիշկ Վիրաբուժական բաժնոյն

ՏՕՔ. ԶԱՐԴԱՐԵԱՆ



Ք. ՅԻՄԱՐԱՆՈՅ

ՄԻԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1899 Յուլիուար 1էն 1900 Յուլիուար 1

Տէր Ա. Տէնապէտ եւ Տէա'րք Խորհրդակալ

Պատուարժան Հոգաբարձութեան

Եկեք Գուշիկի Ազգ. Հաստատութեան

Պատիւ ունիմ ներիակ Ձեզ յղել Յիմարանոցիս արանց եւ կանանց բաժիններուն 1899 տարուոյ ընդհանուր Տեղեկագիրը :

Պատուարժան Հոգաբարձութեանդ ներկայեալ ընդհանուր վիճակացոյցներէն զիւրին է տեսնել թէ՛ որպէս երկու սեռի յիմարաց թիւը յարածուն ընթացք մ'ունի, ուստի կարեւոր է պէտք եղած միջոցները ձեռք առնել զայնս աւելի պատշաճ կերպով պատասխարելու համար. եւ միանգամայն աւելցնել անոնց ծառայող երկրորդական պաշտօնէից թիւն, որպէս զի միջին հաշուով անուազն 12 յիմարի մէկ հսկող ունենանք :

Բժշկեալներու միջինն՝ $\frac{1}{10}$ ին 8,57 է, իսկ մահերունն՝ $\frac{1}{10}$ 8,98 է: Մեր բաժնի հիւանդաց յաճախ պատահած ու ընդհանրապէս անոնց մահաօրիթ եղող ախտերը մարտողական խողովակի հիւանդութիւններն են, որք շատ անգամ հետեւանք են աննոց տեսակին ու անոնց անմարտելիութեան :

Յիմարներն այլ հիւանդներէ աւելի լաւ եւ առատ մտունդի պէտք ունին, զի իրենց մտային տկարութեան պատճառաւ չեն կարող աւտղջապահական օրինաց հետեւիլ :

Ունեցանք նաեւ երկու բաժիններու (արանց եւ կանանց) մէջ մի քանի Թոքային ուռականութեան (Tuberculose pulmonaire) դատապարտեալներ. առ այս կը խնդրեմ Պատուարժան Հոգաբարձութենէդ, որպէս զի հրահանգ սայ՝ տարին գոնէ երկու անգամ իմ բաժինը հականեխել եւ կրով բռել: Կարեւոր է նաեւ փոյթն

ունենալ որպէս զի հարուստ բարերար մը նուիրէ Հիւանդանոցիս Հականեխական ջեռոյ (etuve) մը, որոյ պէտքն ա՛յնչափ զգայի է :

Այս տարւոյ շրջանին մէջ Յիմարանոցս ընդունուածներուն մէջ կը դանուին շատ մը կարեւոր հիւանդներ, յորոց երկուքն արժան կը համարեմ յիշատակել ատա . մին՝ կաղմախօտական եւ միւսն՝ ախտաբանական տեսակէտով մեծ կարեւորութիւն ունենալնուն :

1. Փեփրոն Կարապետ Պօղօն՝ յետն 40 տարեկան, Յիմարանոցն ընդունուած էր Անձնապակճ դասաւորեալ ցնորֆի (Délire systématisé expensif) որոշ ախտանիշերով, մինչ այս տարիքն յիմարութեան ո՛ր եւ է նշան ցոյց տուած չէր եւ իւր ընտանեաց ո՛չ մէկ անդամը ջղային ամենաթեթեւ տկարութիւն մը իսկ չէր կրած : Հաստատութեանս մէջ դանուած միջոցին փոխն ի փոխն Լուսնուտաձեւ լորձքերու (Convulsion épileptiforme) եւ Զախակողմի կիսահարութենէ (Hémiplégie gauche) բռնուեցաւ :

Յետ մահու իւր ընտանեաց հաւանութեամբ դիազննութիւն կատարուելով տեսանք թէ՛ ուղեղի աջակողմեան կիսագունդն ի ծնէ զուրկ էր կողմնային ոլորտէ (circonvolution pariétale) : Այս կարեւոր պարագան պիտի հրատարակուի ի մօտոյ ստորագրեալիս կողմանէ :

2. 1899 սեպտ. 22ին սասիկանութիւնն մեզ զրկեց Պետրոս եւ Տիրիկ Բարսեղեան (եզրայր եւ քոյր) անուանեալները . երկուքն ալ Տիրամոլութենէ (Lipémanie) բռնուած, զորս մասնաւորապէս քննելով համոզուեցանք թէ Զուգախեւութիւն (Folie à deux) անուանեալ բաւական հազուադէպ պարագաներու հանդէպ կը գտնուինք :

Վերջացող տարւոյն մէջ ջղային դրութեան ուշաթափութիւն ունեցողները անկողնոյ մէջ դարմանելու եղանակը ի դորձ զրինք որ գոհացուցիչ արդիւնք տուաւ մեզ :

Իժբաղդարար չունինք առ այս հաստատուն անկողիններ, որք այնչափ կարեւոր են այս դարմանման եղանակին համար :

Եթէ Պատ. Հոգարարձութիւնդ հաճի սոյն անկողիններէն գոնէ՛ 4 հատի գնումն հրամայել, անհունապէս երախտապարտ պիտի ըլլանք, եւ առ այս Ձեր ըրած փոքր ծախան սպահովաբար քիչ ժամանակէն պիտի շահուի հիւանդաց մասին յառաջ բերուած արդիւնքով :

Տարւոյս սկիզբը Փրանսական յիմարանոցին մէջ Ծննդաբերա-

կան մոլեգնութեամբ (Manie puerpérale) վարակեալ մի քանի հիւանդներ դարմանելու առիթն ունեցայ, որոց փորձովն վստահարար տեսայ թէ՛ այս հիւանդութիւնը շղթայաչար գնտամանրէներու (stréptococcus) վարակումէ առթեալ է :

Յիմարանոցս դիմող այս հիւանդութեան ենթակայ կնոջ մը (չունենալով Մարմորէ քի շիջուկն որ այնքան արդիւնք տուաւ ինձ Լարէի հիւանդանոցին մէջ) ուտիճի (sublimé) եւ գլօրաջրածնային գլինգլինիտի (chlorhydrate de quinine) ներարկումներ ըրինք փոխն ի փոխն եւ օր ընդ մէջ, որ խիստ գոհացուցիչ արդիւնք տուաւ : Հիւանդն որ սամսոնցի մ'է, դեռ Հաստատութեանս մէջ կը զբաղուի, սպասելով որ իրենները դան ու գլինքն առնեն :

Մեր անձնական դիտողութիւններով հաստատեցինք՝ այլոց կողմանէ արդէն ծանուցեալ այն իրողութիւն թէ՛ արանց ամուրի վիճակն աւելի սրամաղիր կ'ընէ դանոնք յիմարութեան . արդարեւ 272 այր յիմարաց 196ը ամուրիներ են, 73ը ամուսնացեալներ եւ 3ը այրիներ :

Պատ. Հոգաբարձութիւնդ՝ ներկայ համառօտ տեղեկադրէս կը տեսնայ թէ՛ մեզ յանձնեալ հիւանդները խղճատօրէն խնամելով հանդերձ ջանացած ենք եւ գիտական ուսումնասիրութեանց հետեւիլ :

Տեղեկագիրս վերջացնելէ առաջ, պարտք կը համարիմ Ձեր ուշն հրաւիրել իմ ստորադաս պաշտօնէիցս վրայ, որք թէ եւ թուօք անբաւական, սակայն ջանացած են միշտ ամենայն կանոնաւորութեամբ կատարել իրենց ծառայութիւնքն :

Մասնաւոր յիշատակութեան արժանի է իմ օգնականս Տօք. Գաղազեան՝ որ իւր պաշտօնի անթերի կատարման ամէն ջանք ի գործ կը դնէ :

Վերջացնելով տեղեկագիրս՝ թող տուէք ինձ Տեա'րք, Ձեզ մատուցանել իմ եւ իմ ստորադաս պաշտօնէիցս շնորհաւորութիւնները նոր սկսող տարւոյն համար եւ հաճեցէք զիս համարել միշտ

Ձերդ անձնուէրն

ՏՕՔԹ. Լ. ՄՕՆՃԷՐԻ

Յիմարարուծ Եկտի Դուլէի Հայկական Հաստատութեան

Կ. Պոլիս 3/15 Յունուար 1900

ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ՅԻՄԱՐԱՆՈՑԻ

Ա Յ Ր Ք

ԱԽՏԱՆՈՒՆՔ	Պատահումներ 1899 թվականի	ԸՆԴՈՒՆՈՒԱԾ		Մեկնած				Մեռելիք	Պատահումներ 1900 թվականի
		Դուրսէն	Հիւանդանոցէն	Հիւանդանոց	Բժշկելով	Բարբառելով	Արձակելով		
Բորբորեալ մոլեգնութիւն (Exaltation maniaque).	1	2	0	0	1	1	0	0	1
Մոլեգնութիւն (Manie)	Սուր (Aiguë)	3	2	0	0	2	0	0	2
	Տեւական (Chronique)	14	1	0	0	0	2	0	13
	Անցողական (Transitoire)	2	1	0	0	1	0	0	2
Սուր զառանցանք (Délire aiguë)	0	1	0	0	0	0	0	0	1
Անձնազանձ դասաւորեալ գնորք (Délire systématisé expansif)	11	3	0	0	1	0	0	0	13
Զգայարանական յիմարութիւն (Folie sensorielle)	0	2	0	0	0	1	0	0	1
Պարզ սեւամաղձութիւն (Mélancolie simple)	27	16	0	1	7	1	0	1	33
Տխրամոլութիւն (Lypémanie)	11	2	0	0	3	2	0	1	7
Անձնազառ դասաւորեալ գնորք (Délire systématisé dépressif)	6	0	0	0	0	1	0	0	5
Ապուշ սեւամաղձութիւն (Mélancolie avec stupeur)	4	0	0	0	2	0	0	0	2
Անձկալից սեւամաղձութիւն (Mélancolie anxieuse)	0	1	0	0	0	0	0	0	1
Զուգախեւութիւն (Folie à deux)	0	1	0	0	0	0	0	0	1
	Անցողական (Transitoire)	1	0	0	0	0	1	0	0
	Խօլութիւն (Démance)	7	8	0	0	0	1	0	3
(Démance)	Հետեւական (Consécutive)	25	1	0	0	0	0	0	25
	Ծերութեան (Sénile)	2	0	0	0	0	0	0	2
Յառաջխաղաց ընդհանուր անդամալուծութիւն (Paralysie générale progressive)	5	6	0	0	0	1	0	6	4
Տկարամտութիւն (Imbécilité)	25	8	0	0	0	4	0	3	26
Սպառնութիւն (Idotie)	7	0	0	0	0	0	0	1	6
Թանձրամտութիւն (Critinisme)	1	0	0	0	0	0	0	0	1
Գոհոլականութիւն (Alcoolisme)	7	15	0	0	6	3	0	6	7
Լուսնոտութիւն (Épilepsie)	21	6	0	0	0	3	0	2	22
Հիստէրի (Hystérie)	0	1	0	0	0	1	0	0	0
Ախտնդացաւ (Hypocondrie)	1	0	0	0	0	0	0	0	1
Ուղեղային արեւնակուտում (Congestion cérébrale)	2	2	0	2	1	0	0	0	1
Յիմարութիւն. չ'հաստատուած (Reconnu non aliéné).	0	7	0	1	3	0	0	0	3
	185	86	00	4	27	23	00	25	192
		271			79				192

Բժշկելով (271 : 27 :: 100 : 9,96) = % 9,96

Բարբառելով (271 : 23 :: 100 : 8,48) = % 8,48

Մեռելով (271 : 25 :: 100 : 9,22) = % 9,22

ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ՅԻՄԱՐԱՆՈՑԻ

Կ Ա Ն Ա Յ Ք

ԱԽՏԱԲԱՆՔ	Պատասխան 1899 թվական	ԸՆԳՈՒՆՈՒԹ			ՄԵԿՆԱԾ			Մեռելիք	Պատասխան 1900 թվական		
		Գուրդն	Հիւանդանոցէն	Հիւանդանոց	Բժշկելով	Բարձրելով	Արձակելով				
Բորբոքեալ մոլեղնութիւն (Exaltation maniaque).	2	0	0	0	1	0	0	0	1		
Սուր (Aiguë)	2	0	0	0	1	0	0	0	1		
Մոլեղնութիւն (Manie)	}	Տեւական (Chronique)	7	3	1	0	1	1	0	1	
		Անցողական (Transitoire)	4	3	0	0	0	0	0	7	
		Ծննդաբերական (Puerpérale)	2	2	0	0	0	0	0	0	4
		Հիստէրիկական (Hystérique)	0	1	0	0	0	0	0	0	1
Սուր զառանցանք (Délire aiguë)	1	0	0	0	1	0	0	0	0		
Անձնապանծ դատարեալ ցնորք (Délire systématisé expansif)	5	0	0	0	0	0	0	2	3		
Բարոյական յիմարութիւն (Folie morale)	1	1	0	0	0	0	0	0	2		
Զգայարանական յիմարութիւն (Folie sensorielle)	1	3	0	0	0	1	0	0	3		
Պարզ սեւամաղձութիւն (Mélancolie simple)	5	8	0	2	0	2	0	2	7		
Տիրամոլութիւն (Lypémanie)	1	4	1	0	2	0	0	0	4		
Անձնադատ դատարեալ ցնորք (Délire systématisé dépressif)	3	0	0	0	1	0	0	1	1		
Ապուշ սեւամաղձութիւն (Mélancolie avec stupeur)	4	1	0	0	1	1	0	1	2		
Զուգահիսեութիւն (Folie à deux)	0	1	0	0	0	0	0	0	1		
Անձկալից սեւամաղձութիւն (Mélancolie anxieuse)	1	0	0	0	0	0	0	0	1		
Խօլութիւն (Démance)	}	Բորբոքեալ (Agitée)	2	0	0	0	0	0	1	1	
		Նախնական (Primitif)	1	0	1	0	0	0	0	2	
		Հետեւական (Consécutif)	9	1	0	0	0	0	0	10	
		Ծերութեան (Sénile)	2	1	1	1	0	0	0	1	2
Յառաջխաղաց ընդհանուր անդամալուծութիւն (Paralysie général progressive)	2	0	0	0	0	0	1	1	0		
Ծերութիւն (Sénilité)	0	1	0	1	0	0	0	0	0		
Տկարամտութիւն (Imbécilité)	15	2	0	0	0	1	0	0	16		
Ապշութիւն (Idiotie)	7	1	0	0	0	0	0	0	8		
Լուսնոտութիւն (Épilepsie)	9	2	0	0	0	0	1	1	9		
Հիստէրի (Hystérie)	2	0	0	0	0	0	0	0	2		
Յիմարութիւն. չ'հաստատուած (Reconnu non aliéné)	0	2	0	1	1	0	0	0	0		
	88	37	4	5	9	6	2	11	96		
		129				33			96		

ԲՃՀԿԵԱԼՔ (129 : 9 :: 100 : 7,08) = % 7,08

ԲԱՐԱՌՔԵԱԼՔ (129 : 6 :: 100 : 4,72) = % 4,72

ՄԵՌԵԱԼՔ (129 : 11 :: 100 : 8,78) = % 8,78

Գ ՝ Ո Ր Ք Ա Ն Ո Յ

Մ Ի Ա Մ Ե Ա Յ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

(1898 Սեպտեմբերին մինչև 1899 Օգոստոս)

Երասի-Գուլիի Ազգային երկսեռ Որբանոցն Ուսումնական Խորհրդոյ Կողմական կանոնագրի տրամադրութեանց համաձայն կողմակերպուած տարրական նախակրթարան մ'է , ընդ հակողութեամբ Հաստատութեանս Պատ. Հոգարարծութեան կողմանէ կարգեալ Կրթական խնամակալութեան՝ որոյ կ'աջակցի նաև, աղջկանց բաժնոցն համար , Տիկնանց Խնամակալութիւնը :

Որբանոցս երկուքի բաժնուած է , Մանչերու եւ Աղջկանց : Առաջինն՝ Տեսուչն ինք անձամբ կը վարէ , իսկ երկրորդն՝ աւագ ուսուցչուհւոցն միջոցաւ որ իւր փոխանորդը կը համարուի : Ութը տարեկանէ վար մանչերը աղջկանց որբանոցը կը գանուին :

Աւակերտք . — Աշակերտք բժշկական քննութեան ենթարկուելէ վերջ միայն կ'ընդունուին . տարափոխիկ հիւանդութեանց ենթարկեալք եւ անպատուաստք Հիւանդանոց կը զրկուին եւ իրենց հիւանդութենէ բուժուելէ ու պատուաստուելէ վերջ Որբանոց կը մանեն :

Որբանոցի սանուց 266ը մանչ եւ 56ը աղջիկ են :

Մանչերու 201ը գաւառացի եւ 65ը պոլսեցի են . իսկ ,

Աղջկանց 35ը » » 21ը » » . որով

Ունինք 236 » » 86 » » . այսինքն սանուց

նուց $\frac{3}{4}$ ը գաւառացի եւ $\frac{1}{4}$ ը պոլսեցի են :

Որբանոցիս սանուց 19 հասար միայն թողալաւոր են եւ տարւոյս շրջանին մէջ 9472 դրուչի գումար մը գանձուած է միայն ա-

նոնցմէ: Այս տարեշրջանի մէջ մանչերու որբանոցն 201 սանունք, իսկ աղջկանց որբանոցն 56 աղջկունք եւ 65 փոքրահասակ մանչք աշակերտած են. համագումար 322 սանունք:

Շրջանաւարտ որբերն իրենց պաշտպաններուն կը դրկուին, իսկ անպաշտպաններն հոգեզաւակ կը տրուին եւ կամ Հաստատութեանս Ուսանողաց դասակարգը մտնելով՝ անոնց ուսմանց յարմարները բարձրագոյն վարժարանաց կը հետեւին, կամ արհեստաւորաց քով աշակերտ կը տրուին Հոգաբարձութեան հոգածութեամբ:

Տարեշրջանիս մէջ մանչերու Որբանոցէն 25 աշակերտ եւ աղջկանց Որբանոցէն 7 տղայք, ընդ ամէնն 32 սանունք՝ մեկնեցան Որբանոցէս. 5 տղայք որդեգրութեամբ, 3 տղայք Հիւանդանոցիս մումարանը կ'աշակերտին, մին՝ Պէրպէրեան վարժարանը ընդունուած է որդեգրութեամբ, 8ը իրենց ծնողաց յանձնուած են, 13ը իրենց հայրենիքը վերադարձած են, մին Պրուսայի Երկրագործական վարժարանը դրկուած եւ մին մեռած է: Հետեւաբար տարեշրջանիս վերջը ներկայ աշակերտաց թիւն էր 290:

Կարգադասութիւն աւակերտաց եւ ծրագիր ուսմանց.— Մանչոց Որբանոցը կը պարունակէ Նախապատրաստական Դասարան մը, Նախակրթարանի Տարրական Դասընթացք մը երկու տարւոյ շրջանով, եւ Միջին Դասընթացք մը՝ նոյնպէս երկու տարւոյ շրջանով:

Նախապատրաստականի աշակերտք թուով 66, երկու մասի բաժնուած են, իւրաքանչիւրն առանձին դասարանի մէջ եւ առանձին դաստիարակ ուսուցչի խնամոց տակ: Տարրական Դասընթացքի Ա. Տարին կը պարունակէ 34, երկրորդն 31 աշակերտ. երկու դասարաններու աշակերտք առանձին սենեակներու մէջ զետեղուած ու առանձին դաստիարակ-ուսուցիչներու խնամոց յանձնուած են: Միջին Դասընթացքի Ա. Տարին կը պարունակէր 27 եւ Բ. Տարին 18 աշակերտ, նոյնպէս առանձին դաստիարակ-ուսուցիչներու խնամոց տակ:

Աղջկանց որբանոցը կը պարունակէ Նախապատրաստական Դասարան մը 46 աշակերտներով ու աշակերտուհիներով եւ մէկ դաստիարակ-ուսուցչուհւոյ խնամոց տակ: Տարրական Դասընթացքի Ա. Տարին 26 երկսեռ աշակերտներով մէկ դաստիարակ-վարժուհւոյ խնամոց տակ: Տարրական Դասընթացքի Բ. Տարին 23 երկսեռ աշակերտներով առանձին դասարան մ'ունին: Միջին Դասընթացքի Ա. Տարին 19 աշակերտներով առանձին սենեակի մէջ զե-

տեղուած : Միջին Դասընթացի եւ Տարրականի Բ. Տարւոյ աշակերտք եւ աշակերտուհիք յանձնուած են մէկ դաստիարակ-վարժուհւոյ խնամոց :

Աւանդեալ ուսումք՝ ըստ Կրթական Մրազրի Ուսումն. Խորհրդոյ են . Կրօնագիտութիւն , Հայերէն , Թուրքերէն , Ֆրանսերէն , Երկրաչափութիւն , Տոմարակալութիւն , Աշխարհադրութիւնք , Ընդհ . Պատմութիւն , Բնական Գիտութիւնք , Գծագրութիւն , Գրավարժութիւն , Երգ եւ Մարմնամարզ . Ասեղնագործութիւն , Կար եւ Զեւագիտութիւն աղջկանց համար :

Ժամանակացոյց . — Ըստ Որբանոցիս ժամանակացոյցին սանունք ունին օրը 4 ժամ դասառութիւն , 5 ժամ սերտողութիւն , 9 ժամ քուն , 1 1/2 ժամ ճաշ (երեք անգամի համար) , 1 ժամ առաւօտեան յարդարանք եւ մաքրութիւն , 3 1/2 ժամ հանգիստ եւ զբօսանք :

Բացի օրական մէկ ժամէ ամէն Շաբաթ եւ Չորեքշաբթի կէս օրէ վերջի պահերն ալ յատկացուած են տղայոց մաքրութեան :

Կիւրակէ եւ տօն օրերը՝ ինչպէս եւ տարեկան պարասպուրդին՝ աշակերտաց աւելի ժամանակ կը տրուի հանգստի , զբօսանաց եւ պտոյաներու . իսկ սերտողութեան եւ ընթերցման կը յատկացուին երեք ժամ :

Կիւրակէ եւ տօն օրերը տղայք Ս. Եկեղեցի կ'առաջնորդուին եւ ներկայ կը գտնուին ժամերգութեանց եւ Ս. Պատարագի :

Զգեստաւորում եւ խնամք մաքրութեան . — Աշակերտք շաբաթը մի անգամ ճերմակեղէն կը փոխեն , 15 օրը մի անգամ անկողնոյ սաւան եւ ամիսն անգամ մը մազերնին կը կտրուի ու լաղնիք կ'երթան :

Տարին երկու ձեռք զգեստ կը ստանան , Զատիկն եւ Նոյեմբերի սկիզբը :

Կօշկապութեան արհեստանոց . — Այս տարեշրջանիս Փետրուար ամսէն սկսեալ Որբանոցիս մէջ հաստատուեցաւ կօշկակարութեան արհեստը որուն կը հետեւէին 16 աշակերտք : Արհեստաւոր աշակերտք կը զբաղին օրը 2 ժամ դասառութեամբ եւ 7 ժամ արհեստով : Կօշկակար աշակերտք իրենց երեք վարպետներուն առաջնորդութեամբ կը պատրաստեն Հաստատութեանս պատասպարելոց կօշիկներն :

Արժան կը համարինք աստ ներկայել Կօշկի արհեստանոցի 1899 տարւոյ հաշուեցուցակն .

Մ Ո Ւ Տ Ք

1898 Յունուար 1 ի պատրաստ նիւթք	502 25
Տարւոյ շրջանին մէջ գնուած նիւթք	35018
	<hr/>
	35520 25

Ե Լ Ք

Վաճառեալ 16 զոյգ կօշիկ	470
1567 զոյգ կօշիկ եւ փապուճ պատուարելոց համար .	31680
Արմաշի որբանոցին նուէր զրկուած 20 զոյգ	400
Պատրաստ նիւթեղէնք	1750
Զէն	1220 25
	<hr/>
	35520 25

Ըստ կօշկակարութեան արհեստանոցի պետին այս ցուցակի մէջ ներկայացեալ զէնն աշակերտաց խակութեան եւ խարխափման ժամանակամիջոցի յատուկ է . եւ յուսայ թէ յառաջիկայ տարւոյ մէջ աւելի շահ մը յառաջ պիտի գայ :

Առողջական վիճակ եւ բժշկական խնամք աւակերտաց .— Որբանոցս ունի այցելու բժիշկ մը , Տ.քթ. Նահապետեան էֆ , որ շաբաթը երեք անգամ կ'այցելէ եւ կը քննէ տղայոց առողջական վիճակն եւ առողջապահիկ հրահանգներ կուտայ : Պատահական թեթեւ տկարութիւն ունեցող տղայք Որբանոցիս մէջ այցելու բժշկին հրահանգաւ կը դարմանուին , սակայն քիչ շատ լուրջ տկարութեան նշանները կրող տղայք անմիջապէս կը փոխադրուին Հիււանդանոց : Ընդհանրապէս տղայոց առողջական վիճակը գոհացուցիչ է :

Սնունդ .— Առաւօտեան աշակերտաց կը տրուի իրրեւ նախաճաշ կաթ եւ հաց . ցերեկ եւ երեկոյ ունին մէկ պնակ կերակուր ընդհանրապէս մսով բանջարեղէն , երբեմն պտուղ ալ կը տրուի :

Պատժութիւն . — Որբանոցիս պաշտօնէութիւնը կը բաղկանայ Տեսուչէն , մանչերու բաժնին համար 7 մնայուն դաստիարակ եւ 4 այցելու ուսուցիչ եւ մի այցելու բժիշկ . իսկ աղջկանց բաժինը ունի 4 մնայուն դաստիարակուհի եւ մէկ ձեռագործի ուսուցիչ :

Մանչերու Որբանոցն ունի նաեւ մի հանդերձապահ , 2 գիշերապահ , 2 սեղանապետ , 2 տնտեսուհի , 1 տնտես , 1 դռնա-

պան եւ 1 սպասաւոր . իսկ աղջկանց բաժինն ունի մի հանդերձապահ եւ մի անտեսուհի միայն :

Տարեկան ծախս .— Որբանոցիս տարեկան ծախան է միայն իր պաշտօնէութեան եւ դպրոցական պիտոցից համար շուրջ 700 ոսկի : Այս տարւոյ շրջանին մէջ այս դումարն եղած է 71,556 դրուշ :

Տեսուչ Որբանոցին

Եկտի Գուլէի Ազգ. Հաստատութեան

Յ. Գ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Պ. ԾԵՐԱՆՈՅ ԵՒ ԱՆԿԵԼԱՆՈՅ

Ծերանոցն՝ անոք ծեր աղգայնոց յատկացեալ յարկ մ'է , իսկ Անկեղանոցն՝ աշխատելու անկարող , անաէր անձանց , փորձանաւոր աղջկանց ու լքեալ կանանց յատուկ է : Անկեղանոցի մէջ կը պատասպարուին նաեւ, Ս. Հայեկեղեցւոյ գիրկը դիմելու փափագող այլադաւանք մինչ ց'մկրտութիւն . Բ. Պատրիարքարանի կողմանէ զրկուած ընկեցիկ մանուկներ մինչ Հաստատութեանս Որբանոցը աշակերտելու տարիքն, եւ Գ. Ազգ. Պատրիարքարանի կողմէ զըրկուած կրօնական եւ աշխարհական հիւրեր :

Այս յարկերու մէջ գտնուած են ու կը գտնուին ց'արդ իսկ բարձրաստիճան եկեղեցականներ , մեծագործ բարերարներ , աղգային աշխատաւորներ , անկեալ մեծատուններ, եւ նոյն իսկ Հաստատութեանս հիմնադիրներու շառաւիղներ :

Աշխատելու կարող անկեալները թեթեւ աշխատութեանց կը գործածուին :

Այս յարկերու մէջ պատասպարեալներն առօրեայ երեք ժում մնունդէ զատ կ'ընդունին ծխախոտ, եւ սուրճ պատրաստելու համար սուրճ եւ շաքար :

Այս յարկերուն մէջ շաքաթն անգամ մը ճերմակեղէն կը փոխուի , 15 օրն մի անգամ անկողնոյ սաւան , եւ Հաստատութեանս սափրիչին կողմանէ կ'ածիլուին ու մազերնին կը կտրուի , ամիան

անգամ մը բաղնիք կ'երթան եւ տարին 2 ձեռք զգեստ կ'ընդունին :
Շաբաթն անգամ մը բժշկական ընդհանուր այցելութիւն կ'ընդունին :

Ծերունիք եւ Անկեալք՝ իրենց տրամադրութեան տակ ունին մատենադարան մը եւ կ'ընդունին անդական թերթեր ու հանդէսներ :

Ծերունիք եւ Անկեալք՝ կրնան Հաստատութեանս Մատուռի ժամերգութեանց ներկայ գտնուիլ եւ պարտեզից մէջ ժուռ գալ :

Այս յարկերը՝ պատասպարելոց ծառայող սպասաւորներէ զատ, արանց բաժինն ունի մի ընդհանուր հսկող պետ . Հոգաբարձութիւնս մտադիր է կանանց մասի հսկողութիւնը մի մասնաւոր մայրապետի յանձնել յառաջիկայիւ :

Հաստատութեանս մէջ ծնեալ եւ կամ իբրեւ ընկեցիկ Պատրիարքարանի կողմանէ զրկուած մանուկք՝ Հաստատութեանս զաւակ կ'անուանուին, որք ապա մերթ հոգեզաւակ կը տրուին եւ մերթ Որբանոցիս շրջանն աւարտելէ ետք արհեստի մէջ կը վարժուին . ի չափահասութեան մանչերու ճամբայ կը տրուի եւ աղջիկները կ'ամուսնացուին, ինչպէս նաեւ պատասպարեալ անոք աղջիկներն :

Այժմ ունինք 141 ծեր եւ անկեալ, որոց 96ը արու են եւ 45ը կին կամ աղջիկ :



Ուսանող կ'անուանենք այն ամէն արական սեռէ որք ու անպաշտպան պատանիներն՝ որք կամ Մայրաքաղաքիս մէջ մի բարձրագոյն վարժարան կը յաճախեն եւ կամ մի արհեստի կը հետեւին (ի Քաղաքիս կամ ի Հաստատութեանս) :

Ծարդ ուսանող պատանիներն Անկելանոցի մաս կը կազմէին ու անկելոց հետ կը կենակցէին, ի մէջ կոյս 1899 տարւոյս միայն բոլորովին անջատուեցան անկեալներէն, անուանեցան Ուսանողք, ունեցան իրենց յատուկ յարկ, սպասարկու եւ հսկող մարմին : Առ այժմ Ծերանոցի ու Անկելանոցի պետին յանձնուած է անոնց հսկողութիւնն : Հոգաբարձութիւնս մտադիր է յառաջիկային մի ուրոյն պետ կարգել ասոնց :

Այս պատանիներն ընդհանրապէս Որբանոցիս շրջանաւարտներ են , երբեմն ալ ուսման անյարմար որբեր եւ կամ դրսէն եկողներ : Ուսանողներն պարտին 15 տարեկանէն վեր եւ 22 տարեկանէն վար ըլլալ :

Ուսանողաց դպրոցական եւ երթեւեկի ծախքն Հաստատութեանս կողմանէ կը հոգացուի :

Քաղաքիս արհեստաւորաց քով աշխատող պատանիներն երբ սկսին դրամ չահիլ , այդ գումարէն իրենց առօրեայ ծախուց համար մի մասը միայն կը յանձնուի եւ մնացեալն ի պահ կը մնայ Հաստատութեանս Տնօրէնին քով , ասոնց ապագայ դրամագլխի մաս կազմելու համար :

Հաստատութեանս արհեստաւորաց քով աշխատող ուսանողք՝ երբ բաւական վարժուին իրենց արհեստին մէջ , վարպետներու առաջարկին վրայ շարաթական մը կը յատկացուի անոնց , յորմէ մի փոքր մաս միայն իրենց կը յանձնուի , իսկ մնացեալն իրենց հաշւոյն ի պահ կը մնայ Տնօրէնութեան քով :

Վարժարանաց հետեւող ուսանողներն երբ շրջանաւարտ ելնեն եւ արհեստաւորներն՝ երբ գալճալի աստիճանին հասնին , պարտին այլեւս հեռանալ Հաստատութենէս :

Ուսանող պատանիք օրն երեք ժուժ մուտնդ կ'ընդունին , շարաթն անգամ մը ձերմակեղէն կը փոխեն , 15 օրը մի անգամ անկողնոյ սաւան . ի հարկին մաղերնին կը կտրուի ու կ'ածիլուին Հաստատութեանս սափրիչին կողմանէ , երկու ամիսն անգամ մը բաղնիք կ'երթան եւ սարին 2 ձեռք զգեստ կ'ընդունին :

Այժմ ունինք 35 ուսանողներ , որոնց մին՝ Բժշկական Վարժարանի , մին Դեղագործութեան վարժարանի , 2ը Կեդրոն. Վարժարանի կը հետեւի . իսկ 6ը ոստայնակութիւն , 5ը մոմագործութիւն , 4ը կօշկակարութիւն , 4ը դեղագործութիւն , 3ը թիթեղագործութիւն , 2ը դերձակութիւն , 2ը ատաղձագործութիւն , մին մեքենավարութիւն կ'ուսանին , եւ 3ը Հաստատութեանս Տնօրէնութեան Դիւանի օժանդակ գրագիրներ են :

Զ. Մ Ո Մ Ա Ր Ա Ն

Մումագործութիւնն՝ երբեմն մենաշնորհ օտարաց, Հաստատութեանս մէջ հիմնուելով իւր նիւթական կարեւոր շահէն զատ, կարող վարպետներ պատրաստելով՝ այս արհեստն ազգիս մէջ տարածուելու պատճառն եղած է :

Մումարանս՝ Հաստատութեանս հաստից մի կարեւոր ազբիւրն է, Կ. Պոլսոյ Հայազգի ժողովրդեան հարսանեաց եւ եկեղեցեաց լուսաւորութեան մումերն աստի գնուիլը պարտաւորիչ ըլլած է Ազգ. Պատրիարքարանը, սակայն դշրադգարար կան մայրաքաղաքիս մէջ եկեղեցիներ, որք փոքր շահ մ'ընելու պատրուակաւ՝ դրսէն կ'առնուեն իրենց մումերն, եւ այլք միայն իրենց պիտոյից մի մասն Հաստատութենէս կը գնեն : Իցի՛ւ թէ Պատմ. Թաղ. Խորհուրդներն ի նկատի առնելով Հաստատութեանս աւելի քան 1000 պատասպարելոց պէտքն հոգարու լիծակը՝ իրենց ծայրայեղ անտեսագիտական սկզբանց քով ծնունդ առնէին նաեւ փոքր ինչ բարեգործութեան զգացում, ու յարգելով Պատրիարքարանի հրամանն՝ իրենց սուրբաւառով հաճէին նպաստել Հաստատութեանս : Միեւնոյն ցաւն կը յայտնենք եւ երբեմն ազգայնոց՝ որք հարսանեաց առթիւ լիառատ կը ծախսեն, սակայն մումերու գնման մէջ խնայողութիւն ընելու նպատակաւ Հաստատութենէս փոքր մումեր առնելով Հրաւանի ընդունելնուն՝ այլուստ կը գնեն զարդամումերն եւ այսպէսով Հաստատութիւնս կը զրկեն իրենց նպաստէն :

Հաստատութեանս Մումարանը՝ Մայրաքաղաքիս նոյնատեսակ գործարանաց առաջինը կրնայ համարուիլ եւ ամենայնիւ կրնայ գերազանցել զանոնք :

Մումարանիս գործարանի պեան՝ Որբանոցի վաղեմի սաներէն է, որոյ կ'աջակցին ուսանողաց դասակարգէն 5 որբեր :

Մումարանս՝ Քաղաքիս մէջ եւ Հողարարծութեանս Գրասենեկին կից մասնաւոր վաճառանոց մ'ունի, ուր տեղի կ'ունենան գնումներն ու ապսպրանքները :

Ի ստորեւ կը ներկայենք Մումարանիս 1899 տարւոյ մատակարարութեան եւ հաշուեկշռի ցուցակներն :

Մ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն


Զաւարանի ծախք	3090 750	Գործարանին եղած շահ ապրանսոց վրայ	7378 500
Իրւանսական ծախք	136 000	Վաճառատունին	23893 000
Պաշտօնէից ամսական	8350 000	Նիւթ եղէն նուէր	566 500
